

Ե. Ց. Միևայան

ԵՂԻՇԵԻ «ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ՆՐԱ ՆՈՐԱԳՈՒՅՆ
ՔՆՆԱԴԱՏԸ¹

Զարմանալի բախտ է վիճակված մեր հին գրականութեան գրեթե բոլոր աչքի ընկնող ներկայացուցիչներին. նրանց աշխատությունները մեկը մյուսի հետևից, երբեմն ասանց որևէ յուրժ հիմքի, մի տեսակ մոզայի հետևողություններ, հայտարարվում են ուշ ժամանակի դործեր, կեղծիքներ, որոնք միանգամայն անարժեք են հայոց պատմության համապատասխան շրջանի գիտական ուսումնասիրություն համար:

Այս ընդհանուր բախտից զերծ չէ մնացել նաև հայ ժողովրդի ամենասիրելի ոսկեղեն մտայաններից մեկը՝ Եղիշե վարդապետի «Վարդանանց պատմությունը»: Անցյալ XIX դարի վերջերից սկսած այդ գիրքն ևս ենթարկվել է մանրագնին քննության գտնապես բանասերների կողմից: Բայց մինչդեռ այդ հետազոտություններն սկսվում, XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակում, կրում են շափավոր, փոքր ի շատև անաչառ, դատ բանասիրական բնույթ (Գր. Տ. Պողոսյան, Ն. Աղոնց Բարդեն Կյուլեսերյան և այլք), հետագայում, Պարենացու վերաբերյալ եղած անշափավոր և միատևափոր քննադատությունների օրինակով, Եղիշեի վերաբերյալ քննադատություններն էլ դառնում են անսանձ, անհիմն, բռնադրուսիկ և նախատական ու հայհույտական արտահայտություններիով լի: Եղիշեն էլ հանդես է բերվում իրեն մի «գրական կեղծիք», «ամենաթույլ մի մասյան, որ չի կրնար գիմանալ յուրժ քննադատության»: Այս կարծիքը հայանողը և այն շափազանց ընդարձակ ուսումնասիրությունը պաշտաանողը Վիեննայի միսթարյան Ն. Ակինյանն է:

Մեր՝ այս հոդվածի նպատակն է, ասույթով մի կողմ թողնելով Գր. Տ. Պողոսյանի, Ն. Աղոնցի և Բարդեն Կյուլեսերյանի ու այլոց գիտությունները, ընթերցողներին խիստ համառոտակի ծանոթացնել Ակինյանի ուսումնասիրության ամենաօրինակական կետերին և մեջ բերել մեր առարկությունները նրա բմրանումների դեմ:

Ն. Ակինյանն իր ուսումնասիրությունը նախապես տպել է Վիեննայի «Հանդես Ամսօրյայի» 1931—1937 թվականների համարներում (վերջին հոդվածը զետեղված է 1937 թվականի հոյեմբեր—դեկտեմբեր համարում:

¹ Պարտը ենք համարում այստեղ շնորհակալություն հայտնել Պետերսոնի գեղարվեստական գրականության բաժնին, որ մեզ թույլ տվեց այս հոդվածի համար օգտագործելու Եղիշեի մեր նոր աշխարհարար թարգմանության առթիվ գրած ընդարձակ ներածական ուսումնասիրություն համապատասխան հատվածները:

տակը գրված է «չարունակելի», բայց այդ շարունակութունը չկա այլևս ոչ 1938, ոչ 1939 և ոչ էլ 1940 թվականի 1—6 համարներում. որոնք եղել են իմ ձեռքին): Ակինյանն իր ուսումնասիրութունը հրատարակել է նաև առանձին, երկու հատորով («Եղիշե վարդապետ և յուր Պաամությունն Հայոց սրտերազմին»: Մենական ուսումնասիրություն: Հասար Ա., Վիեննա 1932, 8^ր, ժրթ 399 էջ: Ազգային մատենադարան № 133 և հասար Բ., Վիեննա 1937, 8 , էջ 401—806: Ազգային մատենադարան № 140): Երկրորդ հատորով վերջանում է արդյոք Ակինյանի ուսումնասիրությունը թե ոչ, չենք կարող ասել, որովհետև այդ գրքի յույս առնելու հայտարարությունը ապօրոշ է «Հանդես Ամսօրյայի» 1937 թվի հունվար—մայիս միադյալ համարի շապկի վերջին էջի վրա, իսկ նույն թվի նոյեմբեր—դեկտեմբերի համարում գեո կա, ինչպես ասացինք, մի շարունակելի հոդված, էջ 533—558:

Ակինյանը նույնպես, նախորդ քննադատների նման, այն կարծիքին է, որ Եղիշեն կարգացել ու առատորեն օգտվել է Ղազար Փարպեցուց, որ գեոյրերը նկարագրում է իրականությանը համապատասխան, մինչպես Եղիշեն, իբր, կույրի նման խարխափում է խավարում¹: Այժմյան Եղիշեն մի անշտորհք, անճարակ, հակասություններով լի խմբավորւթյուն է VII դարու, «անձույլ համադրություն մը անմիասնական տարրերու»: Այս ասում է Ակինյանը 1931 թվին, իսկ 1935 թվին «Կամոսարական Աշտախ» հիշատակությունից միայն այն կորակացությունն է հանում, թե «խմբավոր IX դարեն կերևա» («Հանդ. Ամս.», 1935, էջ 234), որովհետև VIII դարի վերջին Արշարունիքի տերն Աշտա Բաղրատունին էր, իսկ Աշտա անունն, իբր, այդ ժամանակներից հետո է ընդհանրացել Բաղրատունիների մեջ:

¹ Եղիշեի և Ղազար Փարպեցու փոխհարաբերության կնճոտ խնդիրը մինչև այժմ չի կարելի լուծված համարել: Այստեղ մենք կուզենայինք բանասերների ուշադրությունը հրավիրել մի կետի վրա, որ մինչև այժմ, որքան մեզ յայանի է, դիտողության չի արժանացել, բայց որը կարող է այս խնդրի վրա պայծառ լույս սփռել: Մեր ասելիքը վերաբերում է այն տեղին, որտեղ երկու սրտմաղիքների մեջ էլ խոսք է լինում Ղևոնդ Լեւոյի հիվանդուս լինելու մասին: Եղիշեն այդ կետը պատմում է ութերորդ գլխում (Տիգրիսի սուղար., 1913, էջ 219—220) հետևյալ ձևով. «Ենչապուր համոզելով Սահակ Կարիսկու պոսին և Հովսեփին, որ չհամանեն իրենց մոլորության մեջ, Լեւոնդ երեցի մասին ասում է. «Ենս գիտեմ, դի ի հրապոյր անոյ այդորիկ էլեւալ էր դուր. Լուկի ինն ախտացեալ է մուրմուրով, և ձեռնարկութեամբ բժշկաց չիբ գտեալ ասողութիւնս և հիւանդոտ կենօք ձանձրացեալ է, և փափաղէ ի մտն բան ի կեանս»: Սրան նախ պատասխանում է Հովսեփ, որը չմխտելով Ղևոնդ երեցի ունեցած գերբու ափեյացնում է. «Երսկ էթէ սա ձանձրացեալ իցէ էլանէլ յախտալից մարմնոյս, առաւել ևս մեր ամեներեան. զի իմ ոմ ամենեկին ի ձեռնեցս կանանց՝ ու ունիցի գմարսին առանց ցատոյ շարատունացու Հետո էլ Ղևոնդ երեցն է նույն մտքով անդրադառնում իր հիվանդոտ մարմնին, պաշտպանում ու դովում է բժշկության արվեստը և հայտնում, որ շարձարված ու հիվանդոտ մարմինը նրա հոգու ասողության նշանն է. նույնը պատմում է նաև Ղազար Փարպեցին (Տիգրիս 1904, էջ 29—81), որ այս խոսակցությունն անել է տալիս Միհրնեսին և ավագանու առջեւ: Այստեղ, Ղևոնդ երեցի ամիս բացատրություններից հետո, որին բարձրաձայն իրենց հավանությունն են հայտնում մյուսները, Միհրնեսինը զայրացած նրանցից պահանջում է «Եւայց դուք դիտել տուր մեզ, թէ և ձեր նոյն բանը են, դոր մահապարտդ այդ իշթեաց աներկիւղ համարձակութեամբ յանդղնել և խոսել առաջի մեր» (էջ 81): Մինչև այստեղ ամբողջ գատավարության ժամանակ գեո ոչ մի խոսք չի եղել Լեւոնդ երեցի հիվանդոտ կամ ցավաղար լինելու մասին: Եւ անհարձ Հովսեփն ու Սահակը իրենց պատասխանի մեջ՝ հայտնելով իրենց համամիտ ու համախորհուրդ լինելը Լեւոնդ երեցի ասածներին՝ ափեյացնում են. «Երսկ դու ախտի գառնուրեան ասողայրացմանդ թշնամանեցեր

Աղիւնյանի կարծիքով՝ Եղիշեի սկզբնաղբիւրը նկարագրած է եղել 572 թվականի Հայոց պատերազմը և ապա դրան հետևող 20-ամյա Պարսկա-բյուզանդական պատերազմները, Հետագայում, 531—595 թվականների վերաբերյալ պատմութեանը ձեւփոխված, ազատագրված և հարմարեցրած է 451 թվականի սպասամբուխի պատմութեանը՝ Ղազար Փարպեցու օխեմբյով կազմված և բոտ աշխատարարակված: «...Եթե սկզբնաղբիւրը 572-ի Հայոց պատերազմը նյութ ունէր իր շինվածքին, խմբաղբիւրը նյութ բնորոշ է իրեն 451-ի սպասամբուխները: Ուրվագիծը մասակարարած է Ղազար Փարպեցին իր ք. դրվագին մեջ. առաջ՝ ծառայած է Եղիշեի Պատմութեանը 7 յեղանակի մեջ: Եղիշեի Պատմութեանը ձեւփոխված է Ղազարի կազմարին վրա. տվելորդ մասերը հաստատված են. սակայնները լրացված՝ հետևելով Ղազարի Գեղարքունիքի նկարագրութեանները հարմարեցված են Ղազարի անգիկութեաններուն, անունները փոփոխված են փոխառութեամբ Ղազարեն: Ամբողջութեան աշխատակազմը պատմագրութեաններու գանդված է. բովանդակութեանը 451-ի սպասամբուխի հարակից գեղարքերն են, իսկ նկարագրութեանները 572-ի Հայոց պատերազմի սպասամբուխի գրվագները» (Քանդեա Ամսորյա, 1931, էջ 183—184): Մի այլ ակնարկում ասվում է, որ սկզբնաղբիւրը ավել է 540—595 թվերի իրադարձութեանները և ավարտվել է 595-ին, Շորոփեան իրեն անձանսի է ասկավին Ստորով Ա Պարփեղի վեցերորդ ասույն (596) խոստացված վերագարձն հայ նախարարներու երկրորդ մասին:»

Մատնանշելով Փարպեցու և Եղիշեի մեջ եղած ասարբութեանները Հազկերտ Ա-ի նկարագրի, նրա մղած պատերազմների ու կատարած զործողութեանների վերաբերմամբ, Աղիւնյանը որոշում է այն «գլխավոր կոմանդները», որոնց վրա ուշադրութեան պետք է դարձնելին Եղիշեի Պատմութեանը ուսումնասիրողները՝ այն ճիշտ բնութեանը համար, բայց չեն դարձրել, «այ Հազկերտ Ա ունէր այն նկարագրին ու աշխարհայացքը, ինչպէս կ'նկարագրվի արքայից արքայն Եղիշեի դրչին տակ: ք) Ստուգիվ պատերազմասէր էր Հազկերտ. արշավեց Բյուզանդական հողեր, թափեց արյուն, ավերեց երկրներ, դարձավ ավարով: ց) Այս արշավանքը բերավ իր հետ խաղաղութեան դաշինք և Պարսկաստանն Բյուզանդիոն փախըստականներու վերագարձ: զ) Հազկերտ Ա-ի որով ուղարկված է Գեորգիանց մը Հայաստան աշխարհաղբիւրը ընելու. անդի ունեցած է առհասարակ V

զգաւ երանի՜ այնողիկ, որ մտազ աշօք սրտեար իջեն և արդարահայեացք. այլ մառնակական տխուր մեծամեծք բժրոնեալ տկարանան, է զի և կրտերը. և զուր զոմ այլուլիսի տխուր մի՜ զայլուլիսեալ բեմամանի, զի զուր էր արժանի եպիտանաց բաղմաց: (էջ 81): Քանի որ Փարպեցու մեջ Միհրնեբսեհը, նաև հետագա գաղտնագրութեան ժամանակ Վեհեհեհապուհը, ոչ մի խոսք չի ասել Գեորգի հիմանդոտ լինելու մասին, որտեղից դուրս եկավ Հովսեփի ու Սահակի այս կշտամբանքը Միհրնեբսեհի հասցիին: Արեւի պես պարզ է, որ Ղազար Փարպեցու ազգայնի մեջ Միհրնեբսեհը կամ Վեհեհեհապուհը որեւէ նման դարձվածք չենդի հիմանդ լինելու մասին ասել է, որ Փարպեցին անուշադրութեամբ բաց է թողել, առանց զգալու Հովսեփի ու Սահակի պատասխանի ու կշտամբանքի անհարկութեանը նախորդին: Ապա պարզ է նաև, որ այստեղ ոչ մի գեղարքում Եղիշեն չի կարող Փարպեցու օգտված լինել, այլ պետք է անսխալ ընդունել, որ մեր այժմյան Եղիշեն ու Ղազար Փարպեցին մի երրորդ ազգայն ունեն իրենց առջի, և շատ հաճանական է, որ այլ ազգայնուր մեւ այժմյան Եղիշեի սկզբնաղբիւրն է կամ հախախտ, որո հետագայում խմբագրվելով ու փոփոխվելով՝ ընդունել է իր այժմյան կերպարանքը:

զարուն մարդահամար և հարկերու գրութեան փոփոխում: Ե) Մզած է Հազկերտ պատերազմ Կովկասյան ազգերու դեմ. Եզած է միջամուխ Գուշանայ երկիրը. զբած է փականք ճորա պահակին: Կ) 451-ի հայկական ապստամբութիւնը պատճառեց մտահոգութիւն Պարսից արքունիքին իբր պատճառ հույն-պարսկական խաղաղութեան լուծման: Կարճ էր Ալարայրի ճակատամարտը «Հայոց աստերազմ» անունն ընդունելու:

Մենք բոլորովին մի կողմ ենք թողնում վերջին հարցը իբրև անբովանդակ, որովհետև ինքն ըստինքյան հասկանալի է, որ ամեն մի նույնիսկ փոքր ապստամբութիւն (իսկ այս դեպքում ապստամբութիւնը փոքր համարել էլ չի կարելի) բնականաբար մտահոգութիւն պիտի պատճառեր Պարսից արքունիքին, մանավանդ որ ապստամբները նույնիսկ Պարսից կողմից մարդկան նշանակված Վասակ Սյունու ստորադրութիւնը կրող թղթով դիմել էին Պարսկաստանի արտյան Բյուզանդիային և նրանից զինվորական օգնութիւն խնդրել: մի բան, որ պատմում է նաև Ղազար Փարպեցին և որի վավերականութիւնն անմիտելի է: Իսկ այս երկրորդական է: Ելևսվորն այն է, որ Ակինյանի ասելով՝ Եզիշնի պատմածը չի հարմարվում Հազկերտ Ա-ին, ուստի պետք է Պարսից պատմութեան մեջ մի ավելի հարմար թաղափոր փնտնել, և Ակինյանն իբրև այդպիսին մասնանշում է Խոսրով Ա Անուշտովանին, որին, իբր, շատ հարմարվում են թե թաղափորի բնութագիրը և թե քաղաքական-տնտեսական դեպքերը: Եւ է, որ առանց պատերազմ հրատարակելու՝ հարձակվում է բյուզանդական երկրամասերի վրա, ասպատակում, ավերում է այդ երկրամասերն ու վերադառնում: Սկսվում են երկարամյա պատերազմներ, հաղթ 562-ին հաջողվում է խաղաղութեան դաշինք կնքել այս անգամ 50 տարվա տևողութեամբ. պայմանների մեջ նշանակված էր նաև «վերադարձ Պարսկաստանից Հռովմեական սահման» փախածներին: Հետո նա արշավում է Կովկասյան ազգերի դեմ, բարելավում է հարկային գրութիւնը և ձեռնարկում է պարտադիր հոշակելու պետական կրօնը:

Գանի որ թագավորների բնութագիրը շատ էական գեր է կատարում ն. Ակինյանի փաստարկումների մեջ և Եզիշնի Պատմութիւնն իբրև հետազոտարկի կեղծիք ցույց տալու ասպացույցների մեջ ամենակարևորներից մեկն է, մի քիչ ավելի մանրամասն կանց առնենք այս հարցի վրա: Ի՞նչպես է նկարագրում Եզիշնի Հազկերտ Ա-ին և ի՞նչ է առարկում ն. Ակինյանն այդ նկարագրի դեմ: Եզիշնի Հազկերտ Ա-ին նկարագրում է իբրև մի պատերազմասեր, արյունարբու, դաժան, քրիստոնյաներիս թշնամի, ամբարտաւան և անձնապատան իշխան, որ սնապարծութեամբ իրեն մարդկային բնութիւնից վեր էր դասում, աստվածանման և անմահ էր համարում: Սրա դեմ Ակինյանն ասում է, թե պարսիկ և արաբ գողները Հազկերտ Ա-ին, ընդհակառակը, գովում են իբրև սողորմած, հեղաբար և խաղաղասեր իշխան: Փարպեցին էլ նրան ոչնչով չի պախարակում, համարում է արդարամիտ (սրինակ՝ պատժեց Վասակին), ավելի շուտ՝ կամազուրկ մի թաղափոր, որին զեկավարում էին իր մինիստրները: Քուշանների դեմ կրած պարտութիւններից հետևում է, որ նա պատերազմասեր բնավորութիւն չի ունեցել: Այնուհետև Ակինյանը թերում է Շախբեկի տված բնութագիրը Հազկերտ Ա-ի մասին. «սա արդար էր իր հպատակներու հանդեպ, բարյացակամ նաև նկատմամբ իր բանակին» և

այլև՝ Սրանից հետևեցելով, որ Եղիշեի նկարագրած թագավորը Հագկերտ II-ն է, այլ Սոսրով I Անուշաուփանը, ինչպես նրան նկարագրում են բյուզանդացիները, մանավանդ Պրոկոպը, Ակինյանը շարունակում է, թե ավելի հետաքրքրական է Եղիշեի պնդումը, որ թագավորն իրեն ձեացնում է աստվածամեծի և անմահ (ընդգծումն իմն է՝ Տ.-Մին.). սա մի ակնարկ չէ՞ այն տխուր դոսի, հարցնում է Ակինյանը, որով Սոսրով I դիմում է Հուստինիանոս կայսրին (Մենանդը, Հատակոտոր 11, էջ 353, տպ. Բոննի, աստուածեղէն, առաքինի, խաղաղասէր իշխան Սոսրով արքայից արքայ, երանելի, բարեպաշտոն, բարերար, որում զիք շնորհեալ են բախտ մեծ և թագաւորութիւն մեծ, սկա սկայից և ի բնութեմէ աստուածոց— «εξ θεων ἄρχαγγελλῶν τεταίβησασί» կայսեր եղբոր մերում խնդալ») և Անուշաուփան մականվան, ու թագաւանւում է անմահ հողի, անմահ Ավելի հիմունքների կարիք չկա, պնդում է նորից Ակինյանը, որ նկարագրված Պարսից թագավորի մեջ Սոսրով I Անուշաուփանին տեսնենք, բայց ուրիշ ապացույցներ էլ կան։ Եվ այդ ապացույցներից ամենազորավորներից մեկը Հագկերտի արշավանքի նկարագրութունն է զեպի հոմեական սահմանները, մինչև Մծրին, երբ թեոդոս կայսրը հաշտութուն է կնքում, որի մեջ կետ կա նաև «փախստականների վերադարձի մասին»։ Ակինյանը պնդում է, որ Հագկերտն այդպիսի պատերազմ չի մղել և երկու պետութունների միջև երկարատև խաղաղութուն է եղել. այդ են վկայում Ֆլորենտիոսի և Անատոլիոսի Մարկիանոս կայսերն ասած խոսքերը, թե պետք չէ խաղաղութան դաշինքը քանդել և մի պատերազմ սկսել, որի վերջը հայտնի չէ, թե ինչ կլինի։ Ասորական Կարթագը Իեթ Սլոփի վկայարանութունն էլ ասում է, որ Հագկերտի առաջին 7 տարիները խաղաղութուն է տիրել, և բյուզանդացիներն էլ այդպիսի կոնֆլիկտի մասին չեն պատմում։ Այս իդիլիան հիմնավորելու համար Ակինյանն առանց այլևայլութան մերժում է մի քանի նշանավոր գիտնականների կողմից (Tillemont, Le Beau, Noldeke) Պրոկոպ Pers. 1,2 հիշված իբր Վոամ V-ի (420—439) ժամանակ կատարված հարձակումը 441 թվին, ուրեմն ոչ թե Վոամ V-ին, այլ Հագկերտ II-ին (449—457) վերագրելը. այլև Ակինյանն ուզում է, առանց որևէ հիմքի, ճարարի ընդհանր վկայութունը, թե Միներներսեհը Հագկերտ II-ի հրամանով մեծ զորքով մտել է հոմեական սահմանները, 421 թվին պատահած անցքերի արձագանք համարել։ Այնինչ, — շարունակում է Ակինյանը, — Սոսրով I Անուշաուփանին շատ հարմար են Եղիշեի նկարագրութունները։ 540—562-ի ղեկներն են կարծ, բայց իրական ակնարկներով պատմված — Միջագետք մտնելը, այրելով ու կոտորելով մինչև Դարա հասնելը, որի ժամանակ հոմեական քաղաքները չեն պաշտպանվում և ընկնում են պարսիկների ձեռքը. եկեղեցիներն այրվում են, բնակիչները կոտորվում, մնացածները գերի տարվում։ Հուստինիանոս կայսրը զուր փորձում է հաշտեցնել Սոսրովին, բայց հաջողվում է հաշտութուն կնքել միայն 562-ին՝ ամեն տեսակ զիջումներ անելով. հաշտության պայմանների մեջ էր նաև § 6-ը, որի համաձայն փախստականները երկու երկրներից էլ կարող էին իրենց տները վերադառնալ։ «Եղիշեի նկարագրած արյունահեղ, դերոզ, գերիոզ պատերազմը չէ մղված ոչ Հագկերտ II-ին և ոչ էլ V դարու ընթացքին», — եզրափակում է ն. Ակինյանը։

Եվ Ակինյանը զարմանում է, թե ինչպես մինչայժմյան քննադատ-

ներն աչքաթող են արել այս հաստիածը: Ու նորից մի անգամ էլ ամփոփում է իր եզրակացությունները. ա) Եգիշեի հեռագրա խմբագիրն անունները փոխել է, բայց ՎՂ դարի գեադերը Վ դարի հանդամանքներին չի հարմարեցրել: բ) Սկզբնագիրը 531—590 թվականների գեադերն է նկարագրում. ըստ այդմ՝ «Հայոց Պատերազմը» 572-ի ազատամբռությունն է և հաճորդ պատերազմները: գ) Գլխավոր գերակատարն է Սուբուր Վ Անոշառփան — Անմահը (531—579): Խմբագիրն առյուծի գլուխը կարել է և «անոր տեղը ազվեսի խալամ մ'է գրած և ներկայացուցած մեզի ազվես մը: Սուբուր Վ Անոշառփանի հզոր գեմբը, ահարկու բարբառը, գիշատիչ մադիլները համարած է, թե Հազկերա ս-ս անփան տակ պիտի թաղչին»: Մի այլ տեղում Ակինյանն ասում է. «Եգիշե փորձած է գաճաճ Հազկերաբ հակային հանդերձներով հրատարակ թնցնել»: «Սուբուր անունը փոխած է Հազկերաի, բայց հորջորջանքն Անոշառփան — Անմահ (յանմահից կարգի գնէր գանձն) վրիպած է խմբագրին ուշագրութենեն»:

Տեսնենք, ուրեմն, թե սրբան հիմնավոր են Ակինյանի գիտողությանները երկու թագավորների նկարագրիչների և նրանց վերագրված պատերազմական և այլ գործողությունների մասին:

Ամենից առաջ՝ Հազկերա Վ-ի նկարագիրը Եգիշեի մեջ: Արդեն ասացինք, որ Եգիշեն Հազկերա Վ-ին նկարագրում է իրրե մի պատերազմասեր, արյունարբու, գաման, քրիստոնյաներին թշնամի, ամբարտալան և անձնապաստան իշխան. որ իրեն մարդկային բնությանից վեր էր գասում և աստվածանման ու անմահ էր համարում: Կա այս բնութագրի մեջ որևէ բան, որ արտաքս կարգի է, չի համապատասխանում պարսից մի թագավորի բնավորության և ստիպում է ավելի հարմարը փնտուել Նախ՝ բարսրովին չմտածված է Ակինյանի այն ասարկությունը, թե Հազկերաը պատերազմասեր չէր, որովհետև մի քանի անգամ հաղթվել է, կամ ավելի ճիշտ, անհաջողությունների է հանդիպել Քուշանների գեմ մղած արշավանքների ժամանակ: Կարելի՞ է ասել, օրինակ, որ Նասրլուանը պատերազմասեր չէր, որովհետև հաղթվեց 1812 թվին Ռուսաստանում, 1813 թվին Ադդերի ճակատամարտում Լայպցիգի մոտ կամ 1815 թվին Վատերլոոյում: Որ Հազկերաը պատերազմ է սկսել հուշների գեմ և ապա երկար տարիներ կսիֆներ մղել Քուշանների գեմ իր պետության արևելյան սահմաններում, ավելի շուտ ակնհայտ ապացույց է նրա պատերազմասիրտ թյան:

Երկրորդ, ոչ մի կարիք չկա ապացուցելու արևելյան որևէ բանակալի գաժանությունն ու արյունարբու լինելը, որովհետև այդ ինքն բասինքյան հասկանալի է, և ավելի շուտ հարկ է ապացուցել, թե նրանցից որևէ մեկն բնահանուր կանոնից բացառություն է կազմել: Որ պարսիկ իշխողներին հեշտությամբ կարելի էր «ամբարիշտ, անօրեն, հպարտ և ամբարտալան» մակդիրները կպցնել, գրա մասին մենք մի վկայություն էլ ունենք «Վկայք Արևելից» ժողովածուի մեջ (Էջմիածին 1921, էջ 186) Ռամզի վերաբերմամբ:

Բայց մի կողմ թողնենք Եգիշեին և տեսնենք, թե ինչ են պատմում օտարները Հազկերաի մասին: Կարճա գը Բեթ Սլոբի նահատակների պատմության մեջ (տես G. Hoffmann, Auszüge aus syrischen Akten persischer

Martyrer, Leipzig 1880, էջ 43--60) ասորի հեղինակը Հաղկերա II-ի մասին պատմում է, որ նա իր թագավորությունն առաջին 7 ասորի քրիստոնյաներին չի հալածել և աստատարակ էլ բարյացակամ է եղել, իսկ «8-րդ տարում սպանել է իր դստերը, որ միևնույն ժամանակ իր կինն էր, և կատարել է սվեյ իր պետության մեծամեծներին¹։ Այնուհետև նա արշավում է Չոյ նահանգը (տեղը հաստատապես հայտնի չէ. ենթադրվում է կամ Հյուսիսային, բուրգանում, կամ Ճորա պահակի մոտերքը։ Վերջին գեղքում բոլորովին անբովանդակ է դառնում Ակինյանի վերևում հիշված հարցերից մեկը՝ հինգերորդը՝ Հաղկերաը պատերազմ մղել է կովկասյան արգերի դեմ) և նվաճում այնտեղի իշխանին, մի քաղաք է շինում և իր անունով Շահրևաան նազդգերդ անվանում։ Այնտեղ եղած ժամանակ նա քրիստոնյաներին դուրս է բռնում իր բանակից։ Ոգորմելին կարծում էր, թե թշնամիները նրան հաղթում են քրիստոնյաների պատճառով։ Եվ նա ընտրեց 10 հազար մոզ, ներքինացրեց նրանց և իր ծառայությունն մեջ առավ։ Նրանցից շատերը մեռան այս դատաստանից։ Եվ պարսից թագավորների դրած այն կարգը, որի համաձայն յուրաքանչյուր ամսի սկզբին մի շարաթ շարունակ ամեն մի պաշտոնյա կարող էր ներկայանալ թագավորի առջևը և անարդար լուծում ստացած խնդիրների մասին զեկուցել թագավորին, այդ կարգն այս շարազործի վերացրեց» և այլն։ Այնուհետև պատմվում են քրիստոնյաների սաստիկ և անողորմ հալածանքները։

Այս տեղեկությունները հայտնի են Ակինյանին, նա դրանք մինչև իսկ մեջ է բերում տեղ-տեղ, բայց չի տեսնում, որ քրիստոնեություն թշնամի, դաժան և արյունարբու լինելու ավելի ակնբախ վկայություններ փնտսել պետք չէ։ Որ ժողովուրդը Հաղկերա II-ին մի դաժան և արյունարբու շարազործ է համարել, այդ պարզ երևում է նաև նրա գառերու կնոջ պատմությունից։ Ինչպես միանգամայն իրավացի նկատում է Նյուլդեբեն (Tabari, էջ 114, ծանոթ. 1), «Թեև այդ բանը (գառեր և կնոջ սպանությունը) հնարավոր է, բայց շատ էլ հավանական չէ, որ պարսիկներում կատարված նման երևույթների մասին որևէ ճշգրիտ բան հայտնի դարձած լինի։ Բայց համենայն դեպս մենք տեսնում ենք, թե ի՞նչպիսի կարծիք կար այդ թագավորի մասին»։ Մրա համար էլ Նյուլդեբեն Հաղկերա II-ի մասին ասում է. «Սա հալածում էր թե քրիստոնյաներին և թե հրեաներին։ Աստատարակ էլ դժվար է նրա մասին որևէ լավ բան ասել» (տես Noldeke, Aufsätze zur persischen Geschichte, Leipzig 1887, էջ 106)։

Երրորդ, այն ամենը, ինչ մենք գիտենք Պարսով Անուշտովանի մասին, բնդհակասակը, բոլորովին չի համապատասխանում Եղիշի՝ Հաղկերաի նկարագրին։ Արդեն Ակինյանն ինքը մատնանշում է, որ միրզուսի, Տարբի և այլն Պարսովին նկարագրում են իրրև ժողովրդին երջանկացնող մի իշխանի, գովում են նրա արդարությունն ու քաջությունը և նրա ժամանակը համարում են Պարսից պատմության ամենաերջանիկ շրջանը։ Հայ պատմագիր Սերևուր նրա մասին ասում է. «Այս Պարսով, որ կոչեցաւ Անուշ Ընուան, ի ժամանակս իւրոյ թագաւորութեանն յաստջ բան դապտամբութիւնս դոյս, հաստատեաց զերկիր. քանզի էր խաղտղասէր և աշխարհաեկև։ Եւ ի լինել տպտամբութեանն այնորիկ, յայնմհեակ ընդոս-

¹ Ընդգծումներն իմն են. Տ.-Մ.Բ.:

տուցեալ դարձեալ ի բարեկեցիւն, գանձն անձնաս համարեալ, իբր թէ «Հայր էի ամենայն երկրի, և ոչ տէր, և սնուցեալ գամենեան իբրև որդի և սիրելի» (տես Սերետի Լալիսկոպուսի Պատմութիւն, ի ձեռն Սա. Մալ-խասեանց, Երեւան 1939, էջ 28): Հետաքրքրական է Տարարիի պատմածը (էջ 266—267), թե Սոսրով Ա-ը սովոր էր ժողովրդին ասել. «Մեր պապը՝ Սոսրով, կալաւոր որդին, ձեզ հոր նման էր նայուում»:

Սոսրով Ա նոշառվանին այլ կերպ են նկարագրում բյուզանդացիները, և այդ լիովին հասկանալի է, որովհետև Սոսրով Ա նրանց ամենաախելիւթ թշնամին էր և շատ ամոթալի պարտություններ էր պատճառել նրանց: Իրա համար էլ, օրինակ, Պրոկոպը նրա մասին տալով է՝ «կեղծավոր, անագորույն, արծաթասեր, սուտ, երգմնադրուժ, ամեն ամոթալի գործողություն կատարող, բնավորութեամբ շատ չար» և այլն, մի կարծիք, որ նյութեր են չափազանցված և անարդար է դանում Պարսից ամենալավ և ամենաշնորհքով թողափորներից մեկի մասին (տես՝ Տարարի, էջ 162): Սրա վրա ավելացնենք նաև այն, ինչ որ Ակինյանն ինքն է բերում Գյուլտեր-բոքի գրքից («Բյուզանդիոն և Պարսկաստան», Վիեննա 1911, էջ 54—55). «Եսրովված պակասություններն շատերը արևելյան բռնապետի մը նախաախյ պատկերը կատարողներն և պարսկական ազգային նկարագրին կհամապատասխանեն: Այսու հանդերձ նշանավոր իշխող և Սոսանյան հարբատութեան ամենահոյակապ թագավորն էր: Ինչպիսիք արևմտյան մտավոր մշակութեան արժեքը գնահատելու էթե նույնիսկ առասպել ըլլա հունական փիլիսոփայութեան մեջ խորամուխ ըլլալը, բայց իրողութեան է, որ հոսմանական պետութեանն վաարված նոր-պրոտոնականաց տղավեն բրավ Տիրոնը և ջերմապետ բարեխոս եղավ Հուստինիանոսի, որ անձնաս հեա դառնալ կարենան իրենց հայրենիքը»:

Այս բոլորից հետևում է, ուրեմն, որ Եղիշեի տված վերոհիշյալ բնութագրին ամեն կողմից շատ ավելի համապատասխանում է Հաղկերտ Ա-ին, քան թե Սոսրով Ա-ին, և առհասարակ էլ մի նոր թագավոր փնտտելու ոչ մի կարիք չկա:

Այնուհետև, ինչպես տեսանք, Ակինյանը շատ մեծ նշանակութեան է տալիս Եղիշեի այն խոսքերին, թե թագավորն իրեն ձեացնում է մարդկային բնութեանից բարձր, աստվածաման և անմահ, և այս բոլորը համեմատութեանն զնկով Սոսրով Ա-ի Անոշառվան մականվան հետ, որ նշանակում է «անմահ հոգի», «անմահ», գալիս է այն եզրակացութեան, թե այստեղ նկարագրված թագավորը միայն Սոսրով Ա կարող է լինել:

Նախ, Ակինյանն այնպես է գրում, կարծես Սոսրով Ա ինքն է իրեն այդ մականունը տվել, որ ոչնչով հաստատել չի կարելի նույնիսկ ժամանակակից վիտյուսթյուններ Սոսրովի այդ մականվան մասին չեն հասել մեզ (Nöldeke, Tabari էջ 136, ծանոթ. 2): Երկրորդ, հայանի է, և Ակինյանն էլ գիտե այդ բանը նյութերից, որ «անտղան շրջանի պարսիկները «անոշակ սովան» կգործածեն «երանելի» իմաստով վախճանվածներու համար» (Tabari, նույն էջ), մի իմաստ, որ լիովին համապատասխանում է մեր «բարեհիշատակ», «երջանկահիշատակ» և «պարմած հոգի» մակդիրներին, և որ հավանորեն հետազաներն են տվել Սոսրով Ա-ին՝ շեշտելու համար նրա դրական գործունեութեանը նյութերն ինքն այս ձևով է հասկացել և Սոսրով Ա-ի այդ մականունը թարգմանել է «der Selige» = «երանելի»։ «Chosrau I. mit den

Beinamen Anoscharvan, „der Selige“, ist jedenfalls ein grosser König gewesen“ (տե՛ս՝ Aufsätze zur persischen Geschichte, էջ 113): Եվ, վերջապես, հրրորդ, այդ սր արևելյան բռնակալն է, որ իրեն սոփորական մարդ է համարել և իր ծագումն ու հավակնությունները մինչև աստվածները չի հասցրել: Ինչու պետք է հիմա այդ արտոնությունը սմիայն Պարսիկ և ի համար պահվի Ս ի թե Ակինյանին հայտնի չէ, որ ոչ միայն արևելյան թագավորներն իրենք, այլ նաև նրանց հպատակները սոփորություն ունեին իրենց թագավորներին աստվածների հետ համեմատելու, աստվածների հետ կապելու և նրանց աստվածային պատիվներ մատուցանելու: Այդ սոփորություն ու հայացքների մեկմտցած արձագանքն է, անկասկած, բրիտանական շրճանի թագավորների տիպոսի մեջ միշտ գործածվող «ոգործ» թեմամբ աստուծոյ» արտահայտությունը: Մեր ասածի ճշտությունը և Ակինյանի փաստարկման անհիմնությունն ակնհայտ է ցույց տալու համար մենք մի քանի վկայություններ կրեքենք հենց միմիայն Ղազար Փարպեցուց, վկայություններ, որոնք խիստ հատկանշական են:

էջ 154 (հրատ. Տիգրս, 1904). Պերոզ թագավորի համար երկու անգամ ասված է՝ «աստուածամտն տէրն Պերոզ» և «ինքն աստուածամտն տէրն Արևաց Պերոզ»:

էջ 175. Վահան Մամիկոնյանը Ղազար թագավորին ասում է. Այն ինչ որ գուք արիք մեզ համար, մտեկանացու մարդու համար անհնար էր, և միայն աստված կարող էր անել... «Որպես եղէք աստուածորար կենդանացուցիչ մեռելու թեմանս իմոյ... կամ էլ, թե գրովանդակ անձնս յարուցեալ էր, և ոչ զկէսս. վասն զի զկէսս մեռեալ տեսանեմ զեռ»:

էջ 42. Միհրանեսին ասում է Հազկերտին. «Արդ քանի աշխարհք են, որում գուք իշխէք աստուածաբար...»:

էջ 48. Հայ նախարարներն ասում են Հազկերտին. «Իշխանութիւն ունիս նման աստուծոյ ի վերայ մեր և ամենայն մարդոյ...»:

էջ 93. Վեհկենչապուհն ասում է Շահաստանի մարդկանց. «Յիշեցէ՛ք զերկիւց թագաւորաց, որք նման աստուածոց իշխեն սպանանել և կեցուցանել...»:

էջ 79. Վարդանի քաջագործությունների վերաբերյալ ասվում է Հազկերտի մասին. «Կոր իւր իսկ աստուածամտն տեսան իւրով աչօք տեսեալ էր ի Սարկիսոտ՝ զնորա քաջասրտութիւնն...»:

էջ 98. Վեհկենչապուհը Հովսեփին ասում է. «Զի թէպէտ և թուին մեզ ծանր թշնամանքդ, որով թշնամանեալ ասացիր զմեզ անմիտս և կորուսեալս, սակայն առ համարձակեալսն յանդղնութեամբն, զոր իշխեցիր յաստուածամտն քաղաւորն առել բանս անարժանս՝ իրրև զոչինչ թուին ի մեզ կողմն թշնամանքդ մեր անձանց և թեթևութիւնն»:

Այս սոփորությունների և մտայնությունների պատկերը լրացնելու համար հիշենք նաև Վրաց Աշուշա թղեխի նորահնար երկրպագությունը Հազկերտին. «Յարուցեալ ի խորանին աստծի ամենեցուն անկեալ յերկիր հոյովէր այսր և անոր, և ապա հարկանէր զզոյս ի գեախնն» (Փարպեցի, էջ 107):

Իերված օրինակներից ամենայն ակնհայտ թյուր պարզվում է, ուրեմն, թր տիրող հասկացողությունների ու սոփորությունների համաձայն՝ Հազկերտ և նա էլ իրավունք ունեն իրեն մարդկային բնությանից վեր և աստվա-

ծանձանք բան համարելու, և ամենևին կարիք չկա Եղիշեի նրա մասին սասածը վերադրելու Քոսրոսի Լ-ին և Եղիշեին կեղծարար դուրս բերելու:

Սի այլ կետ, որի վրա շատ է կանգ առել Ալիբնյանը և որի հիման վրա փորձել է ապացուցել, թե Եղիշեի սկզբնապիւր Պատմութեանը վերաբերել է 531—590 թվականների զեպտեբրին, Եղիշեի Պատմութեան սկզբի հետևյալ բառերն են Հաղկերտի մասին. «Եւ առ յոյժ յիմարութեանն ի սրկ զպազան մի կատարի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց. եհար մինչ քաղաքս Մծրին, և բազում պաւսոս Հոսոմոց աւերեաց սապատակու, և գամենայն եկեղեցիս հրձիւ պարս. կուտեաց դաւար և զգերի, և ահարեկ պարս գամենայն զօրս աշխարհին»:

Ալիբնյանը գտնում է ամենից առաջ, որ Հաղկերտը որևէ նման արշավանք չի գործել հոռոմեական պետութեան սահմանները. եթե նա մղած լիներ մի այլպիսի պատերազմ, «որ ահարեկ պարս գամենայն զօրս աշխարհին», և որի շարասփը հասած էր մինչև մայրաքաղաք», այդ չէր կարող բյուզանդական պատմիչներին և ասորիներին անծանոթ լինել, ինչպես որ է իրոք: Նա, ինչպես ասացինք, չի ընդունում Նյոյդեքեի և ուրիշների բացատրութեանը, ըստ որի Պրոկոպի Pers. 1,2 պատմած արշավանքը պետք է վերադրել ոչ թե Վուամ V-ին, ինչպես արել է Պրոկոպի թյուրիմացարար, այլ Հաղկերտ II-ին, մի բան, որ շատ հավանական է զարձրել Նյոյդեքեն (տես՝ Tabari, էջ 116, ծանոթ. 2): Բայց այս մի կողմ թողնենք:

Իսկ այն է, որ Ալիբնյանը տարօրինակ կերպով չի ընդունում նաև Տարարիի բացահայտ հիշատակութեան ճշտութեանը, թե Հաղկերտի թագավորութեան սկզբում հոռոմայեցիները զանգաղեցին վճարելու սահմանված տուրքը պարսիկներին, որի պատճառով Հաղկերտը Միհրնիսեհին մեծ գործով արշավանքի ուղարկեց, և Միհրնիսեհը իրականացրեց թագավորի կամքը (Tabari, էջ 116): Նրա համար նշանակութուն չունի նաև այն, որ Տարարին որոշակի տարրերում է այս արշավանքը Վուամ V-ի օրով 421/422-ին տեղի ունեցած արշավանքից, ասելով, թե Միհրնիսեհն ուղարկվեց այնքան գործով, որքան Վուամ V-ի օրով կատարված արշավանքի ժամանակ (Tabari, էջ 116, հմմտ. էջ 108): Ալիբնյանի ամբողջ փաստարկութեանն այն է, թե մեծ արշավանքների և արյունահեղութեանների մասին այդ վկայութեանների մեջ խոսք չկա, ընդհակառակը, այնտեղ կոնֆլիկտը լուծվել է անարյուն, մինչդեռ Եղիշեի պատմած արշավանքները «ծանր հետևութեաններ ունեցած են»: Այս միտքը նա կըրկնում է շարունակ. «Նույնիսկ եթե համաձայնենք, որ Պրոկոպիոսի հիշատակած զեպքը նույնն ըլլա Տարարիի ակնարկած արշավանքի հետ և հրատարակված պատերազմը խաղաղած ըլլա անարյուն, չենք կրնար նույնին հետ միարանել Եղիշեն, որ արյունահեղութեաններու մասին կխոսի»: Այստեղից Ալիբնյանը հետևյալում է, որ Եղիշեի նկարագրութեանը վերաբերում է 540-ի արշավանքին: Այնուհետև Ալիբնյանը հատվածներ է բերում Եղիշեից և իր կողմից բացատրում է զրանք. նրա մեջ բերած կտորներն ու բացատրութեաններն այնքան բնորոշ են նրա բանասիրական, մեթոդի համար, որ կարևոր ենր համարում իրրև նմուշ մի երկուսը դնել այստեղ:

Եղիշե

Աղիճյանի բացատրությունը \

«Քանզի յոյժ սիրելի էր նմա խոտովութիւն, արիւնհեղութիւն, վասն այնորիկ յանձն իւր ասարա-
քերէր, թէ յո թափեցից զգասնու-
թիւն թիւնից կամ ուր բացասե-
ցից զբազմութիւն նեւից»:

Սա տկնարկում է Մաղղակյոնց կոտորածը, արքայորդիների ու նրանց զավակների կոտորածը, նախարար-
ների և արքայորդիների կողմնա-
կիցների սպանությունը: «Ասոնք
531—539 տարիները լեցուցին»:
539-ին սպարաստություններ հոտ-
մեական երկրներն արշավելու:

Ինչու խոտովությունն ու արյունհեղությունն այդ է և ոչ թե Հաղ-
կերա ու-ո օրով կաաարված մեր վերը նկարագրած զազանությունները
(իւր դասեր ու կնոջ սպանությունը, զարձյալ ավագանիների կոտորածը, 10
հազար մոզերի ներքինացումը, քրիստոնյաների արյունահեղ հալածանք-
ները), այդ հայտնի է, երեւի, միայն Աղիճյանին:

«Եւ առ յոյժ յիմարութեանն իրրե զգազան մի կաաաղի յարձա-
կեցաւ... և ահարեկ արար զամենայն
գորս աշխարհին»:

540-ի արշավանքի նկարագրու-
թյունն է, համառոտ, բայց կուռ-
հասով Անախոք, այրեց, ավերեց եր-
կիրը — առանց զիմադրության: Զորքն
ահարեկված էր և զիմադրություն
չէր ցույց տվել:

Մենք անսանք արդեն, որ Հաղկերա Ա-ի թագավորության սկզբում
տեղի է ունեցել արշավանք և այն էլ մեծ զորքով: Իսկ ոչ մի այդպիսի
արշավանք առանց արյունհեղության ու ավերումների չի լինում: Անհե-
թեթ է նաև Աղիճյանի այն բողոքարությունը, թե հոսմեական գորքը գեո
զիմադրություն ցույց չտված ու սպարաություն չկրած՝ ահարեկվել էր,
Իայց այդ հատվածի մասին ստորև:

«Իսկ երանելին թէ զոս կայսր, քանզի խոպաղասէր էր... (Անատոլ
զորավարին ուղարկում է հաշտու-
թյուն կայացնելու):

Թեոդոսն ու Անատոլը խմբադիրն
է վախելի: Պեար է լինի Հուսախնիա-
նոս], և ու թե «խաղաղասեր» էր,
այլ բանակներն զբաղված էին Լաս-
լիա և Աֆրիկա, դրա համար փորձեց
հաշտեցնել Սոսրովին:

Բացատրության բունադրոսիկությունն ու անհեթեթությունն այնքան
ակներև է, որ չարժե այդ մասին որևէ ավելի բան տեսլ:

Եւ արք սարսիկը, որք փա-
խուցեալ էին վասն քրիստոնէու-
թեան, և էին ի քաղաքի կայսեր,
կալա և եա ի ձեռս նորա»: (Այս-
տեղ Աղիճյանը փակազծերի մեջ իր
կողմից ավելացնում է՝ «Հուստի-
նիանոս»):

Սա կակնարկե 562-ի մշտնջենա-
վոր խաղաղության զաշինքի 6-րդ
կետը, «Եւ առ փախստականներ կա-
յին — դասալիրներ՝ քաղաքական կամ
կրոնական պատճառից զրզված —
ասպավինած և ասպաստան դրած էին»
(Պյուտեբրոֆ, էջ 104—107). — բոլոր

այդ փախստականներուն խաղաղության գաշինքով (§ 6) անարգել թույլ տրվեցավ իրենց հայրենիքը վերադառնալ և ամեն պատժե ազատ կազուցվեցան:

Անկանխակալ բնթերցողի համար միանգամայն պարզ է, որ Եղիշեի ասածը և 562-ի հաշտության 6-րդ կետը բոլորովին աարբեր բաների մասին են խոսում: Եղիշեն ասում է, որ կայսեր քաղաքում կային քրիստոնեությանն պատճառով փոխած պարսիկներ. սրանց բռնեց կայսրը և հանձնեց Հազկերտին: Սերևին, խոսքն անհասանելի մասին է, որոնք պարսիկ լինելով՝ քրիստոնեություն էին բնդանել և պարսկական օրենքով մահապարտ էին: Իսկ 562-ի հաշտության 6-րդ կետը մի բնդհանուր երկուստեք թույլատրություն է փախստականներին հայրենիք վերադառնալու: Ի՞նչ կատարող է լինել մամանակով ու բովանդակությամբ իրարից միանգամայն տարբեր այդ երկու յթյունների մեջ:

Եվ այսպիսի բանասիրական հնարամտություններից՝ հետո Ակինյանը եզրակացնում է, թե սրանք բոլորը «դասական ազազույցներ են», որ «Եղիշեի նկատի առած իշխանը միայն ինքնուրույն Անուշաբույանը կրնա ըլլալ և ակնարկված գեղքերը 510 – 562-ի պարսկա-հռոմեական պատերազմի պատմության էջերն են... Այնպես բացահայտ են պատմագրին տողերն այստեղ, որ շատ դուռս հոգնեցնել պետք չկա վերահասու ըլլալու համար իրողություններուն»: Եվ դարձանում է Ակինյանը, «թե ինչպես Եղիշեի քննադատները չէին անդրադարձած անոր մինչև այսօր Ավելի շոշափելի կոման, քան որ կուտա այս հատվածին մեջ մեղի Եղիշե, չէր կրնար սպասվել»:

Սակայն, եթե այս ամբողջ դործի մեջ մի դարձանալու բան կա, այդ էլ հենց Ակինյանի փաստարկումներն ու եզրակացություններն են, որոնք, — իր իսկ խոսքերով ասենք, — միանգամայն «բռնադրոսիկ են, երևակայական և անզոր»:

Բանասիրական տեսակետից իրոք մի շատ լուրջ խնդիր է, թե ինչպես պետք է հասկանալ Եղիշեի մեջ բերված հատվածը՝ «Եհար մինչ ի քաղաքն Մծրին. և բազում գաւառս Հոռոմոց աւերեաց ասպասակաւ և գամենայն դօրս աշխարհին»: Չէ՞ որ նույն Եղիշեն մի երկու էջ ներքև Հազկերտի հրովարտակի մեջ «Առ ամենայն ազգս աէրութեան իմոյ» նույն արշավանքի մասին հեռեկայն է ասում. «Առանց դձեղ ինչ աշխատ առնելոյ խաղաղաք դնացաք յերկիրն Յունաց, և առանց գործոյ պատերազմի սորով մարդասիրութեամբ նուաճեցաք գամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն»: Այս ակնբախ և բացահայտ հակասությունը չի կարելի վերացնել Ակինյանի այն ոչինչ շատեղ նախադասությամբ, թե «Այսպես ճանչնալով հանձին արքայից արքայի՝ Սոսրով Վ-ի գեմքը, հասկանալի կրլլան այնուհետև նաև հրովարտակին հոխորա խոսքերը, հատուկ պարսկական մեծախոսության և ինքնավի նկարագրին, թե «առանց գործոյ պատերազմի», այսինքն՝ առանց թշնամու հեռախոսում ունենալու՝ «սիրով մարդասիրությամբ (?) նուաճեցաք գամենայն երկիրն (Հոռոմայեցւոց) մեզ ի ծառայութիւն», ակնարկելով այն աուրքը, զոր դրած էր Հոռոմայեցւոց վրա

(545) իբրև պայման գինադադարի» («Հանդես Ամսօրյա», 1931, էջ 603)։
 Երևի զգալով, որ իր ասածին բոլորովին չեն հարմարվում «սիրով մար-
 դասիրութեամբ» բառերը (երկրներն ավերելը, եկեղեցիները հրձիգ անելը,
 ժողովրդին թալանելն ու գերելը խնկապես որ անկարելի է հաշտեցնել
 «սիրով մարդասիրութեամբ»-ի հետ), Ակինյանը նրանց վերաբերմամբ հար-
 ցական նշան է դնում։

Մեզ թվում է, որ երկրներ ավերելու վերաբերյալ կտորը պետք է,
 նկատի ունենալով հրովարտակի վերև մեջ բերված հատվածը, կամ ճար-
 տասանական շափազանցություն համարել, կամ, որ ավելի հավանական է,
 հետադայի ընդմիջարկություն. մանավանդ որ այդ հատվածը թյուրի-
 մացություն կարող է առաջացնել և անխմստ էլ է. ինչ է նշանակում
 «եհար մինչ ի քաղաքն Մծրին»։ Ձէ՞ որ Մծրինը պատկանում էր Պարսից
 պետությունը և նրա առաջավոր քաղաքն էր՝ հստակական նահանգների
 վրա հարձակվելու համար. ուրեմն պարսից զորքն ավերել ու հրդեհել էր իր
 սեփական երկիրը մինչև Մծրին։ Մեր եզրակացությունն այն է, որ այդ
 հատվածի վրա ոչինչ հիմնել չի կարելի և Ակինյանի փորձն այստեղ ևս ձա-
 խողված պետք է համարել։

Սակայն Ակինյանն իր կանխակալ կարծիքը հաստատելու համար ըն-
 դարձակորեն քննություն է անում նաև Հազկերտի արշավանքների խնդիրը
 Քուշանների դեմ և այստեղ էլ ներքին հակասություններ է գտնում, անհա-
 մաձայնություններ Ղազար Փարսեցու հետ. կարծես Փարսեցին էլ ժամա-
 նակակից Եղիշեի նման սլարտավոր էր մանրամասն իմանալ ամեն գար-
 նան կրկնվող այդ փոխադարձ մանր-մունք սահմանամերձ հարձակումներն
 ու ասպատակությունները թե՛ պարսիկների և թե՛ Քուշանների կողմից, և
 եթե Փարսեցին անձանոթ է մնացել դրանցից մի երկուսին կամ չի հիշա-
 տակել դրանք իբրև աննշան բաներ, ուրեմն Եղիշեին պետք է մեղադրել
 խարդախության մեջ։ Ակինյանի ասելով, օրինակ, սկզբնադրում եղել է
 Քուշանների ժողովրդի տարիները (արշավանքներ Հեփթաղների դեմ). այդ
 թվերը Եղիշեն խարդախել և դարձրել է Դ—Ժա, որպեսզի համաձայնեցնի
 Հազկերտի՝ Քուշանների դեմ մղած տոաջին արշավանքները նույն թաղա-
 վորի հետագա արշավանքի հետ, որ եղել է նրա թաղավորություն ժող տարին։
 Այս ձևով վարվելով՝ Ակինյանը նույնիսկ այն տեղն է հասնում, որ Հազկերտ
 II-ի Քուշաններից կրած պարտությունները՝ հենվելով Եղիշեի վրա՝ վերադր-
 րում է Քուշանների վրա։ Անողորմաբան, որի մասին ոչ մի տեղից հայտնի չէ, թե
 պարտություն կրած լինի Քուշանների հաջորդ Հեփթաղներից, Լնդհակա-
 ոակը, հայտնի է, որ Քուշանների խաբանը հետ միացած, ոչնչացրել
 է Հեփթաղների պետությունը։ Ակինյանը շատ լավ գիտե, որ Հեփթաղ անունն
 առհասարակ ծանոթ չէ Եղիշեին և նա այս արշավանքների առթիվ գործ է
 ածում Քուշաններ կամ ավելի ընդհանուր Հոներ անունը։ Բայց փոխանակ
 սրանից այն միակ ճիշտ և տրամաբանական հետևությունն անելու, որ Եղի-
 շեն իր Պատմությունը գրել է մինչև Քուշանների անհետացումը պատ-
 մություն թատերարհմից (468-ին) և Հեփթաղների ասպարեզ դալը, Ակի-
 նյանն այստեղ էլ փորձում է գանազան անհամոզիչ և նույնիսկ անլուրջ
 բացատրություններով առաջ քշել իր թեզը. նա դրում է, «Ճարօրինակ է
 հրովարտակի մեջ Քուշանաց տերությունն արտահայտությունը, բանի որ

այդ պետութիւնն այլևս չկար և Պարսկաստանի թշնամիները Վլ դարի առաջին կեսին Հեփթաղներն էին: Մուշանները 468-ին հետացած էին արդեն իրենց նախկին հայրենիքէն, թողնելով դաշն ավար Հեփթաղներուն: Ինչպես այժմ արքայից արքա անոնց հիշատակութիւնը կրնա բնել կհիշեմ պարսիկ սուրհանդակին խոսքերը, ըստ ժամ ատիժի՝ Պերոզի սպանութեան լուրին. «Ամենայն մարդ տեսանել լոկ սիրով չկարէր դաշնն Հեփթաղ և կամ դանուէն լսել լսել, թող թէ կոտոր ընդդէմ Հեփթաղի երթալ» (Փարսեցի): Իբրք ալ 485-են ի վեր ոչ մեկ պարսիկ համարձակած էր ոտիս կանգնել Հեփթաղին: Այս էր թերևս պատճառը, որ խուչս տված էր արքայն լսելի ընել Հեփթաղներու անունը: Սերիմն արքայից արքա հզոր Խոսրով Ա-ը, ըստ Ակինյանի, գորածոցով անելով՝ Հեփթաղների դեմ պատերազմելու համար, և այն էլ Հեփթաղների պետութեան անկման ժամանակաշրջանում. հրովարտակի մեջ վախեցել է իր բանակին հայտնել, թե ում դեմ են պատերազմի գուրս դալու, և խուսափել է Հեփթաղների անունը ասուց, որպէսզի իր գորքերը չսարսուխեն: Սրանից էլ ավելի անլուրջ և անհիմն առարկութիւնն դժվար է պատկերացնել:

Նուշնախի անհեթեթութիւնն է Հեփթաղների պետութեան կործանման (554-ին) մասին ակնարկ տեսնել Եղիշի այն տողերի մեջ, որտեղ նա պատմում է, թե Մուշանների թագաւորը չկարողացավ Պարսից Հաղկերտ թագաւորի դեմ գուրս դալ պատերազմով, այլ խուսափեց դեպի ամուր անապատի կողմերը և «թարսաեամբ ապրէր Եանդերձ ամենայն գործն իւրով»: Պարզ չէ՞ միթէ, որ եթէ Մուշանների թագաւորը կարողացել է իր ամբողջ զորքով խուչս տալ, որովհետև, երևի հանկարծակիի եկած, չի վստահացել կովի բռնակի, ապա ուրեմն նրա պետութեան կործանման մասին խոսք չի կարող լինել:

Ապա՝ Ակինյանը Եղիշիի մեջ դանում է այս դեպքերի ժամանակագրութեան համար մի ամուր կտման— «571-ի աստղերու երևումը «լուսալիր պայծառացեալ» և «նույն շրջանին անցի ունեցած երկրաշարժը»: Այս կտմանի մասին ևս առանձին ոգևորութեամբ է խոսում Ակինյանը. նա ասում է. «Համոզվելու համար, թե ուր, որ դարուն ունի Եղիշի յուր պատմական հողը, բախական էին արգեն այն ասպուցույցները, որոնց հասանք պատմական համեմատութեամբ, Բայց չեմ կրնար անտեսել կարևոր կտման մ'ալ «լուսալիր պայծառացեալ», որ ունի իր մեջ ուշժը՝ կույրին ալ տեսանելի բնելու դարը, որ կգործէ Եղիշի... Բանապրոսիկ էին թերևս մեկնութիւններս, երևակայական թերևս համեմատութիւններս, և անցոր վերջապէս ասպուցույցներս պարսկա-հմայմեական, պարսկա-հեփթաղական և պարսկա-թրքական պատերազմներէն: Կարող են գտնվել մարդիկ, որ այսպէս դատեն: Բայց թե նաև ասպարաշխական ասպուցույցիս առջև ատի ուղեն համարի անոնք իրենց կանխակալ կարծյաց վրա, անհամարալի պիտի երևա ինձ»: Եվ ապա բերվում է երկու բերգերի առանց ձեռք ասուլու քանդակը և «լուսալիր պայծառացեալ» աստղերի երևումը (Եղիշի, III դրութի), որոնցից առաջինը (բերգերի քանդակը) բացատրվում է պարաշարժով, իսկ երկրորդը («լուսալիր պայծառացեալ» աստղերը)՝ մոլորակների կոնստելլացիայով, որոնք երկուսն էլ պատահել են 570—571 թվականներին և վկայված են արարական պատմագիրների կողմից՝ կապելով իրենց մարդարև Մահմեդի ծննդյան հետ:

Մի կողմ թողնելով մտորակների կանստելացիայի հարցը, որը պատմվում է բոլոր կրոնների հիմնադիրների ծննդյան առթիվ, և որով դեռ չի հաջողվել ոչ մեկի ծննդյան աստիճանը որոշել (օրինակ, չի հաջողվել նույնիսկ Քրիստոսի ծննդյան ճիշտ տարեթիվը ասացի երեւելով որոշել, և դանազան գիտնականներ դանազան տեսակ են հաշվում), այստեղ պետք է ուշադրութեամբ դարձնել հետևյալ հանդամանքների վրա:

• Նախ, Եզիբեի համապատասխան տեղը, ինչպես Ալիքսանդր Էլ շեշում է, շատ խանդավառ է. նրա շարադրութեանն անկասկած և անհարկ թե՛ նախորդ և թե՛ հետագա պատմածներին: Արդեն վերևում պատմվում է, որ ուխտագահները հարձակվում են այն բերդերի և ամրանների վրա, որոնք գտնվում էին պարսիկների ձեռքում և աստղալէին քանդակի պրնակութիւնն ուղղած (այստեղ Եզիբեն թվում է անսովոր բերդերն ու անմատուցյ ամրոցները, թե՛ մեծերը և թե՛ փոքրերը), ըստ բնակիչներին գերի են առնում. քանդակ-ամրում են և հրկիզում կրակի պաշտամունքի տեղերը և ամենուրեք կանգնեցնում են Կրիստոսի փրկական խաչը և վերակենդանացնում քրիստոնեական պաշտամունքը: Ապա Եզիբեն ամելացնում է՝ «Յուսով հաստատեալ խնդայր ամենայն երկիրն առ հասարակս: Սրա տրամարանական և բնական շարունակութեանն սկսվում է ճիշտ անայն առաջ քայմաց եկն ենաս հաղարտական Ազուանից սաւրբ եզիբեայոսաւ աշխարհին...» և այլն հատվածով (Եզիբե, 1913, էջ 88 և 89): Իսկ այս երկու հատվածների միջև ընկած պարբերութեանները նորից պատմում են քերդերի վրա հարձակվելու մասին, որի ժամանակ նրանցից երկուսը առանց ձեռք տալու իրենք իրենց կործանվում են և աստարակ գարմանալի հրաշքներ են պատահում («ամենայն մարդ պատմէր ընկերի իւրում տեսիլս նորս և դարմանալիս», — ինչպես ասում է Եզիբեն), որոնց մեծ են նաև «չուսալիք պայծառացեալ» ասացերը: Եթե Եզիբեն հետագա խմբագրութեան է ենթարկվել և նրա մեջ հաստատույթ հատվածներ կան, իսկ այս ակնհայտ է, ապա այս խառնաշփոթ հատվածները պետք է անկասկած այդպիսիների շարքը դասվեն:

Երկրորդ, Եզիբեի մեջ այդ հատվածներում ոչ մի ակնարկ չկա երկրաշարժի մասին (սերիուս մեծամեծ բերդայն պարիսպին ասանց ուրուք մերձեանալոյ անկեալ կործանեցան, մինչև ամենայն բնակչաց երկրին գահի հարեալ ի մեծ նշանէն, ինքեանք ինքեանց ձեռք վերականգնեալ այրէին): Այստեղ պատմված է մի մարտը հրաշք երկրորդի պարիսպների կործանման կամ Հեռու գատափորի հրամանով արևի կանգ առնելու նման («Իրք Յեսու նաւեայ, Զ 20, Ժ 10—13»), մինչդեռ երբ երկրաշարժի մասին է խոսքը, մեր պատմիչներն այդ բանը որոշակի բաներով հասկացնում են: Օրինակ, Եզիբեն VIII գլխում Աննոյանց նահապետութեանից հետո. «Երաքեալ հասարակ գիշերաւ շափ՝ ձայնք անեղք հնչէին, և բնգիւնք որոտաձայնք ի ներքուստ՝ որպէս զորումն գետնաշարժի. երկիրն զողայր ի ներքոյ նոցա: Կամ Ապար Փարպեցին (էջ 102) նույն առթիվ. «Յանկարծակի ի նմին աուր յերկորեայ գիշերոյն լինէր շարժումն մեծ ի տեղուցն, բոմբիւնք սաստիկ և ձայնք անազիւն յանդնոց ննչին... քանզի զողումն մեծի շարժմանն ի վեր սասուցեալ զնոսա ընկենոյր յերկրէ... և դադարէր երկիրն ի շարժելոյս: Կամ հմմտ. նաև Վկայք Արեւից, էջմիածին 1921, էջ 234. «Շարժումն և ձայն մեծ որոտման ի չորրորդում աուր... և իջեալ հուր երկնից և կիզեաց

դպրահասակներն և քարինք բազմաց տաճարին կործանեցա՞նք...»։ Իսկ Եղիշեի համապատասխան հատվածում, ինչպես աեսանք, ոչ մի նման նկարագրություն չկա. այնտեղ պատմված է միայն այն դարձանալի հրաշքներից մեկը, որոնք պատմվում էին բերնեբերան ժողովրդի մեջ, ինչպես Եղիշեն էլ հենց ասում է՝ «ամենայն մարդ պատմէր ընկերի իւրում»։

Երրորդ, ժողովրդի մեջ պատմված և մեր պատմագիրների մեջ քննարկած այդպիսի դարձանալի հրաշքների վրա որևէ բան հիմնելու փորձը առնվազն միամտություն կլինի։ Օրինակ, Փարպեցին վերև նկարագրված երկրաշարժի մասին ասում է, թե այն աեղի է ունեցել միայն երկու ասպարեզի չափ ասարածության վրա, որ անհեթեթություն է, կամ՝ նույն պատմագրի ասելով՝ (մի բան, որ չկա Եղիշեի մեջ)՝ Ղևոնդյանց մարմինները դանում են երկնքից իջած լույսի շնորհիվ, որ գիշերը ցերեկվա նման պայծառ է դարձնում։ Էլ չենք խոսում Ազաթանյանի պատմած հրաշքի մասին Տրդատ Թաղավորի և հայոց զորքի մկրտության ժամանակ (Ազարանգեղոս, հրատ. Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Կանայանի, Տփղիս 1909, էջ 433—434), որ մի ամբողջ օր է տևում, Հայանի է, որ մի այդպիսի հրաշապատում գրույց էլ ժողովրդի մեջ պատմվել և մեր պատմագիրների մեջ է մտել Մեսրոպ Մաշտոցի մահվան առթիվ (Կորյուն և Մովսես Սորենայի)։ Նրա մահվան ժամանակ այն ասն վրա, «յորում երանելին վախճանէր», «խաչանման լուսավոր շողավոր ձևով սքանչելի տեսիլ երևաց, և ամեն մարդ ինքը աեսավ այդ և ոչ թե ընկերը պատմեց»։ Այդ նշանը երևում է այնքան ժամանակ, մինչև որ Մեսրոպի մարմինն ամփոփում են Օշականում և սուպա նշանն աներևոյթ լինէր» (Կորյուն, հրատ. Մ. Արեգյանի, Երևան 1941, էջ 92—94, հմմտ. Մովսես Սորենացի, III գիրք, Կէ գլուխ)։ Մենք ավելորդ ենք համարում այսպիսի երևույթների իրականությունը «համապատասխան» լինելու մասին խոսել, թեև 1940 թվին էլ կարող են մարդիկ պահվել, որոնք նման բաներն իրական են համարում և աշխատում են բացատրել «գաղտնի վրա զրված ոգորկ արձաթե խաչի ցուպցումով օդի մեջ խաղաղ եղանակին, արեղակի ճառագայթների աակ» (տե՛ս Ստ. Մոյսիսյան, Սորենայի, աշխարհարար թարգմանություն, ծանոթ. 344, էջ 340—341)։ Իրրև թե՛ հնարավոր է, որ այդպիսի ցուպցումը մի քանի օր տևի և բոլոր բողոքությունը տեսնի, թե կրսնական մոլեռանդությունը կամ հիվանդոտ երևակայությունը ինչեր տեսնելու և ինչեր հնարելու է ընդունակ, դրա մի փայլուն ապացույցն էլ հենց Ստ. Մայիսյանի իրրև օրինակ բերած նորագույն ղեպքն է. «1893 թվին Սրբմյան Հայրիկի օժման ժամանակ ուսուց պաշտոնական «ԼԱՅԿԱՅ» լրագրի խմբագիրն անձամբ պնացել էր Էջմիածին իրրև թղթակից իր լրագրի եվ նա հոկտեմբերին հեռագրեց «ԼԱՅԿԱՅ»-ին, թե օժման ժամանակ (որ կտտարվում էր բաց օդում, տաճարի հյուսիսային պատի մոտ) օդի մեջ տաճարի վրա լուսեղեն խաչ երևաց։ Ոմանք այն ընդունել են իրրև լուսեղեն խաչ, որ իշներն էլ ճանաչել են իրրև արեղակի շարժը կուպած բակ։ Այս մասին, որքան պատենք, տպագրված է նաև «Արձագանք» թերթում»։ Նախ, եթե նման բան տեղի ունեցած լիներ, այդ մասին ամենից ավելի պիտի թմրկահարեր Էջմիածինն իր «Արարատ»-ով, և երկրորդ, մեկը ևս, որ այն ժամանակ 14 տարեկան պատանի էր և Էջմիածնի ճեմարանի 17 զա-

սարանի աշակերտ ու անձամբ բոլոր աշակերտներին հետ միասին՝ ներկա էի օժման ամբողջ հանդեսին, պետք է այդ հրաշքը տեսած կամ գոնե լսած լինեի: Բայց ես այդ մասին առաջին անգամ յսում եմ 1940 թվին Մալխոսյանի ծանոթագրությունից: Պարզ չէ՞, որ դա էլ ժողովրդի մեջ բերներերան անցնող մի երևակայական հրաշք է, որի բակ կամ խաչ լինելն անգամ չեն կարողացել ճշտիվ որոշել: և որն իր նպատակների համար փորձել է օգտագործել «ԿԱՅԿԱՅ»-ի խմբագիրը:

Մենք այս պատմությունը բերինք միմիայն նրա համար, որպեսզի ցույց տանք, թե Եղիշեի մեջ պատմված այդ ժողովրդականությունը վայելող հրաշքներն էլ (բերդերի առանց ձեռք զիպցնելու կործանվելն ու «լուսավիր պայծառացեալ» աստղերը), անկախ այն հանգամանքից, թե երբ են նրանք մտել Եղիշեի մեջ, անշուշտ նույն տիպի երևույթներ են, և նրանց վրա հիմնված եզրակացությունները ոչինչ ապացուցել չեն կարող: Այնպես որ բոլորովին իդուր է Ակինյանն իրրև «աներկրա իրողութուն» ներկայացնում իր եզրակացությունը և դարձանք հայանում, թե «Ինչպես E. Drouin և J. Marquart, նաև Th. Nöldeke, որոնք այնպես վկայալ տեղյակներ էին 545—572 տարիներու հյուսիսական աղվերու և դրացի պարսիկ պետություն քաղաքական հարաբերություններու մանր ու մեծ ելևէջներուն, չեն կըրցած անդրադառնալ Եղիշեի Պատմության հարազատ իմաստին և հարած կանխակալ կարծյաց՝ շարունակած են սպառնալից դայն իրրև «ժամանակակից» ազդյուր V դարու պարսիկ-քուշանական հարաբերություններու համար»: Հիշված յուրժ ղիտնականները չէին կարող, իհարկև, այդպիսի խաբուսիկ և երերուն հիմքերից այդքան ծանրակշիռ եզրակացություններ հանել:

Հետևյալ ծանրակշիռ խնդիրը, որ բերում է Ակինյանն իրրև սպառնալից Եղիշեի կեղծիք լինելուն: Ինչնչապուհի Հայաստան պալն ու կառարած աշխարհագիրն է: Ակինյանն ասում է, «Եթե չունենայինք իսկ ուրիշ հենարաններ, գամապիա բլլալու Եղիշեի Պատմության հորինման թվականին, անոր Պատմության շոշափած ժամանակներուն, բավական էր այս աշխարհագիրն ինքնին գլխավին, բանալու համար աչքերը, թե ուր կապրի և ինչ կպատմե պատմագիրը: Կխոստովանիմ, ինձի համար անակնկալ մը եղավ, երբ կանց առնելով աշխարհագրիս բով ևս ինձ հարց տվի, թե ծանոթ է աշխարհագրիս Պարսից պատմության: Եվ թղթատելով Տարարիի Պատմությունը՝ կարգացի հոն Խոսրով V Անուշաուվանի օրով տեղի ունեցած աշխարհագրի մանրամասնությունները՝ Երկու պատմագիրներու հարցրած տեղեկություններն ըստ ամենայնի նույնը գատ. անոնք կլրացնելին և կլուսարանելին դիրարու կասկածս, որ գոյացած էր իմ մեջ նկատմամբ Եղիշեի Պատմության հարազատության, ոստումով մը փոխվեցավ ստուգություն Եղիշեի պատմագիրը լուծված էր: և, Այոնց և Մանանդյան ալ աչքի առաջ ունեցած էին այս տեղերը, բայց կանխակալ նախապաշարմունքը չէր թույլ տվել ճիշտ հասկանալու Եղիշեն» և այլն:

Սակայն Տարարիի և Եղիշեի համեմատությունը ցույց է տալիս, որ

1 Այդ աշխարհագիրը կատարելու կարգադրությունն արև է իսկապես կապատ V (488—531), որի օրով և հիմնականում տեղի է ունեցել այն: Խոսրով V-ը կարգադրել է միայն ավարտել գործը և ըստ այնմ հարկերը նշանակել: Տե՛ս Tabari, էջ 241—242:

նրանց տված տեղեկությունները ո՛չ միայն ըստ ամենայնի նույնք չեն, այլև Լակյան կետերում հակասում են միմյանց: Օրինակ, Տարարին ասում է, թե թագավորը հրամայել է սայնպիսի օրենք սահմանել, որ հպատակներն իրենց աստիճանին համեմատ կարենան բարեկեցիկ և հանգիստ կյանք վարել, կարգադրվում է սղխահարկ գնել բոլորի վրա, դուրս հանելով աղատները, մեծամեծները, գինիօրները, քահանաները, նոտարները և այն ամենքը, որոնք արքունի ծառայություն մեջ են»։ Թագավորը պահանջում է, որ պաշտոնյաները նշանակվածից սվելի հարկ չպահանջեն, փաստած հունձից հարկ չվերցնեն, 50-ից վեր և 20-ից ցած ասրիք ունեցողներին աղատեն սղխահարկից և այլն և այլն (Տարարի, էջ 241—247): Եվ նյութերեն էլ այդ առթիվ բացատրում է, թե հոգահարկի կանոնադրումն անշուշտ ձեռնտու եղավ հավասարակես թե հպատակներին և թե արքունի դանձարանին: Այդ հարկերի ծանրությունը չի գզացվել: Իսկ նյութեն ասում է, թե Դենշապուհը եկեղեցին և հոգևորականներին հարկի տակ գրեց և երկրի հարկը ավելի ևս ծանրացրեց: Այս երկու տեղեկություններն այնպես բացարձակորեն հակասում են միմյանց, որ նրանց նույնություն մասին խոսելը միայն «կանխակալ նախապաշարմունքից» բխած քաշբքշուկ է: Եվ իրար խնջպես քաշքշուկ շանձանել Ակինյանի այս առթիվ գրած տողերը. «Հարկերու փոխոխությունը, որուն նպատակն էր թե ժողովրդյան բարեկեցությունը նպաստել և թե՛ արքունի դանձարանը հարրատացնել, կերևա նյութի տողերեն, թե Հայաստանի համար մասնավոր թեթևություն չբերավ (այս նշանակում է՝ Դենշապուհը հարկերն ավելի ծանրացրե՞ց) — կամ որովհետև, դո՛ւն Հայաստանի մեջ հին Արշակունյան հարկահանություն ձեր ավելի մեղմ էր և նպաստավոր, և կամ դորձակալները կանխարավին, չափեն ավելի պահանջելով տուրքերը: Ինձ կի՞վի, թե երկու տեսակեաներն ալ կային»: Այս մեթոդով կարելի է, իհարկե, աշխարհում եղած բոլոր իրական հակասություններն ու դժվարությունները վերացնել, բայց միմիայն... երևակայություն մեջ:

Ապա՝ աշխարհագրի խնդիրը: Եթե Դենշապուհը պետք է Հայաստանում նոր կարգեր սահմանելու եկեղեցին ու հոգևորականությունը հարկի տակ գներ և երկրի հարկերն ավելի ծանրացներ, ապա չէ՞ որ նա գրա համար պետք է ցուցակագրություն կամ աշխարհագրի աներ: Եվ Դենշապուհը Դեռնդյանց դատավարություն ժամանակ հիշատակում է, ինչպես կտեսնենք փոքր ինչ ստորե, որ նա ասրիտեկես շրջել է Հայաստանում՝ անշուշտ այդպիսի մի ցուցակագրության համար: Ի՞նչ հարկն է ստիպում Հայաստանում հատուկ նպատակով կատարված այս մասնակի ցուցակագրությունը սուսումնասիրելու նույնացնելու գրեթե մի դար հետո ամբողջ պետություն մեջ կատարված աշխարհագրի հետ: Չէ՞ որ մենք ուրիշ աղբյուրներից էլ տեղեկություններ ունենք քրիստոնեական եկեղեցու հարկի ենթարկված լինելու մասին. հմմտ. «Վկայք Արևելից», էջ 104 — «Սախակին հարկահանքն անճարին հարկոք գաղասություն եկեղեցույ և այնպես ջանային, զի աս սակաւ-սակաւ բարձրեն գաստուածարարությունն», կամ՝ «Յամին հարիս բերորդի, եթն և տասներորդի թագաւորութեանն Պարսից, որ էր ամ երեսներորդ ատաջներորդ Շապհոյ արքայից արքայի, արկին ի հարկ դքրիտունեայն» (ուրեմն 340—341 թվին), կամ՝ Անդ, էջ 108. «Այլ զհարկսդ,

զոր եղիք՝ մեք յանձն ոչ առնումք: Բաւ լոցի մեզ, որ եմք ազատ և բնէ, մտանել ի ծառայութիւն մարդկանս: Մի՞թե պարզ չէ, որ այդպիսի հարկեր գնելուց առաջ պետք է ցուցակադրութիւն կատարուի, թե քանի եկեղեցի կա, որքան հոգևորական, կամ առհասարակ քրիստոնյա, որոնք հարկի ենթակա են, իսկ եթե հարցը վերաբերում էր մի ամբողջ երկրի, ինչպես այս դեպքում Հայաստանին, ապա պետք է ամբողջ երկրում ցուցակադրութիւն կատարուի կամ աշխարհագիր արվի: Ուրիշ ինչ կերպ կարող էր երկրի դրութեան սեջ այդպիսի փոփոխութիւն կատարուի, հասկանալի չէ:

Այնուհետև, դալով Դենշապուհի հարցին, Ակինյանն առաջում է Եղիշեի հիշած Դենշապուհին և Ասողիկի հիշած մարդպան Դենշապուհին, որի գործունեութիւնն ընկնում է V դարի երրորդ քառորդին՝ նրա կարծիքով՝ Վերկու անձնավորութիւններու նույնութիւնը ամեն կատկածից վեր է: Ասողիկը (Էջ 84) այս Դենշապուհի մասին միայն այսքանն է ասում, թե «զշնմօրութիւնն շատացոյց և զորմզղական հուրն փռեաց ի Ռշտունիս, և ստիպէր զքրիստոնեայս կրակի երկիր պապանել. յազազս որոյ բազումք մեռան»: Այս նկարագրութիւնը և Եղիշեի Դենշապուհի գործունեութիւնը Հայաստանում բոլորովին չեն համապատասխանում իրար: **Եղիշեի Դենշապուհը** վերև հիշված շարիքներից և ոչ մեկը չի գործում Հայաստանում, և ուրևն ոչ մի բանական հիմք չկա այդ երկու անձերի նույնութեան հարցը գնելու: Բացի այդ, մենք տեսանք, որ Ակինյանը սխալվում է թե՛ հարկերի և թե՛ աշխարհագրի վերաբերյալ հարցերում. ուստի և սրանից բխող երկու Դենշապուհների նույնացումն էլ պետք է սխալ լինի: Ազգար Փարպեցուց ևս հայտնի է, որ V դարի Պարսից պետական գործիչների մեջ կա Դենշապուհ կամ Վենդենշապուհ անունով մեկը, որին հանձնարարվում է Ղեսնդյանց գատավարութեան և նահատակութեան գործը: Ակինյանի գիտողութիւնը, թե Դենշապուհին շպետք է շփոթել Ազգարի Վենդենշապուհի հետ, միանգամայն անարժեք է, որովհետև Ազգարն այդ միևնույն անձին թե՛ Վենդենշապուհ է անվանում (Էջ 88, 89, 92—102) և թե՛ Դենշապուհ (Էջ 97—102—105), ուրևն անվան մեջ ոչ մի ատրիբութիւն չկա: Ապա, Եղիշեի մեջ մի հատված կա (VIII գլ., էջ 218—219 և 221), որ ոչ մի գեղարում չի կարող խմբագրական հավելված կամ փոփոխութիւն, ուր մնաց կեղծարարութիւնն լինել կամ վերագրուի V դարի մարդպան Դենշապուհին, այնքան անմիջականութիւն կա նրա մեջ, և անձնական հիշողութիւնների հաս է բուրում այնտեղից: Այդ հատվածում Դենշապուհն ասում է հայ հոգևորականներին. «Յորժամ եկի ես յաշխարհն Հայոց՝ գտարի մի և վեց ամիս եկաս շրջի ինձ անդ. ոչ յիշեմ ես ամենեին՝ եթէ քան մի տրտա՞ջ յումեքէ յուայ փասն քո (Մահակ Եպիսկոպոսի), նոյնպես և առաւել փասն Յովսէփայ. զի զա իսկ էր իշխան ամենայն քրիստոնէից և հաւատարիմ յամենայն իրս արքունիս նաև որ մարդպան աշխարհին լեալ էր յառաջ քան զիմ երթալն՝ մեծապէս զոհ էր գառնէս գայամանէ. զի ես ինձն աչօք իմօվ տեսի, զի որպէս հայր հաստատուն համարեալ էր ամենայն աշխարհին, և անաչառութեամբ սիրէր զմեծամեծս և զփոքունս... Իմ զի ադ և եաց կերեալ է յաշխարհին անբում, զուրի և սէր ունիմ ընդ աշխարհն ձեր»:

Այսպիսով, բոլորովին անտեղի է V դարի Դենշապուհին, որ պատ-

մական անձնավորություն է, տեղափոխել VI դարի մեծագույն և նույնացնել մի ուրիշ անձնավորության հետ, որը պատահաբար նույնպես Դենշապուհ անունն է կրում:

Այնուհետև, հայանի է, որ Եղիշեն Հաղկերտի մասին պատմում է, թե նա քրիստոնեյացիներին հալածել է ո՛չ միայն Հարստանում, այլև Պարսկաստանում (ե՛նա և հրաման յափշտակել զքրիստոնէից զինչս և զստացուածս, որք էին ի մէջ Պարսկաց աշխարհինս — Վգրուխ, էջ 19): Այս մենք անսանձ արդեն նաև ասորական կարգա զը Բեթ Ալոքի նահատակների վկայարանությունից: Հայանի է նաև, որ Հաղկերաք կրօնական անսակեաից մի մոլեռանց թագափոր լինելով՝ առհասարակ հալածել է իր պետութեան մեջ եղած բոլոր մարդկանց, որոնք մազդայական կրօնին չէին պատկանում, օրինակ, նաև հրեաներին: Ուրեմն այս անսակեաից ևս Եղիշեի և արաքիւնների աված բնութագիրը Հաղկերա Ա-ի մասին, ինչպես մի անգամ արդեն նշել ենք, միանգամայն համընկնում է:

Այս ակնրախ հանգամանքներն ևս սուրի ասկ տալով՝ Ալեհնյանը փորձում է Եղիշեի ակնարկած քրիստոնեութեան բնդհանուր հալածանքները վերադրել Սոսրով Վ Անոշառփանին, թեև շատ լավ գիտե, որ այդպիսի մեղադրանքը բացարձակապես ոչ մի պատմական տեղեկութեամբ արդարացնել չի կարելի և միանգամայն հակասում է իրեն ևս քաջ հայանի անդեկություններին: Այդպես, Սոսրով Վ Անոշառփանը հայտնի է իրրև բավականաչափ պատմաբան մի թագափոր, որ հետաքրքրվել է իրր թե նաև հունական փիլիսոփայութեամբ և ուրիշ ազգերի կրօններով, թեև այդ հետաքրքրութեան, ըստ Նյոլդեբերի, հումորիստական բնույթ ունեւր Սոսրով Վ-ը մոլեռանդ մարդ չէր և մանավանդ մոլեռանդ մազդայական չէր: Նրա օրով եղած սակավաթիվ մասնակի հալածանքները վերաբերում են միմիայն այն պարսիկներին, որոնք քրիստոնեյա էին դարձել ուրանալով մազդայական կրօնը, մի բան, որ պարսկական օրենքով պատժվում էր մահով: Հայանի է նաև, որ նույնիսկ այդ օրենքը Պարսկաստանում, հատկապես Սոսրով Վ-ի ժամանակ, խստիվ չէր դորձադրվում: օրինակ, նեստորականների կաթողիկոս Մար-Արան (մեռել է 552-ին) և ուրիշները երկար տարիներ պարձել են իրրև հոգևորական, պետական պաշտոններ ևն վարել և չեն հալածվել: Սոսրով Վ-ը Գրիգոր Ռափիկին գերութեանից դառնալուց հետո տալիս է իր նախկին պատիվները, գիտենալով, որ նա օւրացել է մազդայական կրօնը: Հետեւելով իր հոր՝ կալտաի քաղաքականութեանը Սոսրով Վ-ը վերահաստատել է նրա դրած օրենքը — օւրաքանչիւր օք զիւր հաւատ կալցիս, և քրիստոնեյաներին ոչ մի վիշա չի պատճառել: 540 թվականի հոկտեմբերի Մար-Արայի Պողոպի որոշումների մեջ Սոսրովի մասին ասվում է՝ «ողորմած և բարեբար, ... որի սիրտը բոլոր արարածների փրկիչ Քրիստոսը շարժում է իր բարի կամքի համաձայն, որպեսզի նա շարունակ նրա սուրբ եկեղեցու բարիք խորիք (տես Braun, Das Buch der Synhados, Stuttgart und Wien, 1900, էջ 99): Գրիգորի վկայարանության սկզբում էլ (Hoffmann, Auszüge, էջ 76) ասված է. «Հույների 850 թվականին (=538/539) քրիստոնեյաների վիճակը շատ երջանիկ էր. նրանք ամենուրեք եկեղեցիներ ունեւին և ոչ օք չէր կարող նրանց փոսս հասցնել, ինչպես սահմանված էր թագափորական մի հրամանով: Այս վիճակը տեւց

Պերոզ թագաւորի իշխանութիւնից մինչև Սոսրով թագաւորի տասերորդ տարին (539/540)։ Այս թիւին մոզերը քրիստոնեաների դեմ հալածանք հանեցին։ որտեղ քրիստոնեաները բույլ (սակավարիւ) և, այնտեղ բունգվեցին եկեղեցիներն ու վանքերը։ Այստեղից պարզապես հետևում է, որ սկզբունքային պետական հալածանք չի եղել քրիստոնեութան դեմ, այլ միայն մոլեռանդ ամբոխի կուլքներ, որոնք առանձին դասներ չեն տվել և մեծ չտոկերի չեն հասել։ Բայց ավելի հետաքրքրական է նույն վկայարանութան հայերեն խմբագրութիւնը (Կ. Տ.-Մկրտչյան, Կրիպոր Մանաճիհր Ռաժիկ, էջ 22)։ «Ի տասերորդի թագաւորութեան Սոսրովայ որդոյ կաւտայ Պարսից արքայի եւ հրաման յարքայէ ընդ ամենայն պատաս իշխանութեան իւրոյ, որպէսզի գորս գտցեն յազգէ Պարսից խոստովանեալ ի Կրիստոս, կալեալ արգելցեն ի բանդ և խիստ տանջանօք բոնադատեցեն, զի ուրացեալք դաստուածաշտութիւնն՝ երկրպագեցեն արեւական և պաշտեցին զհօրք։ Սոսրը վերաբերում է, ուրեմն, դարձյալ միայն մագղկական կրօնն ուրացած պարսիկներին։

Սնդիրը պարզ է. Սոսրով և Անուշավանը երբեք ընդհանուր հալածանք չի հանել քրիստոնեաների դեմ։ Ինչո՞ւ Ակինյանն այս բոլոր մանրամասնութիւնները մեջ բերելուց հետո ասում է. «Այնուհետև (հուլիների հետ 562 թիւին զաշինք կնքելուց հետո) չի հիշվիր, թե Սոսրով հալածած բլլա քրիստոնեաները կամ իր օրով նահատակված բլլան նորագարձներ, Ընդհակառակը, շրջան տուով հրապարակի վրա այն զրույցը, թե Սոսրով իր մահվան անկողնոյն մեջ նետադրականներու կաթողիկոսն ընդունած բլլա մկրտութիւնը» (Սեբեոս, Հովհաննէս Եփեսացի)։ ...«Հազվագեպ անգամ դատապարտած է Սոսրով քրիստոնեայ մը քրիստոնեութան համար ի մահ. իսկ թե քրիստոնեայ մը բռնի մոզութիւն զրգած է, կարելի չէ ապացուցել ժամանակակից աղբյուրե, նկատի չառնելով Եղիշեն և իրմե կախում ունեցող Հովհաննէս Եփեսացին»։ «Արեւայից արքայի այս եանդուրժող քաղաքականութեան շնորհիւ էր, որ Հայաստան հույն-պարսկական պատերազմներու բովանդակ տեղադրում մնաց պարսիկ դրոշին եւ վատարիւմ... «Այսպէս, կրնանք ըսել, թե մինչև 570 մոտավորապես հայերը չունեին մասնավոր զժողովութիւն մը արքայից արքայի վարած քաղաքականութեան դեմ ի մասին կրօնի և եկեղեցիո, «զի չէր ուրուք ձեռն արկեալ յայտնի յեկեղեցին» (Եղիշեն)։ Սեբեոս, ըստ Ակինյանի, քրիստոնեութեան ընդհանուր հալածանքի պատճառը Սոսրով և ի ժամանակ եղել է Կիլիկիոյ մի ատրուշան կատուցելու խնդիրը. սրա համար է «Հովհաննէս Եփեսացու ժամանակակից Եղիշեն» քրիստոնեութեան ընդհանուր հալածանքներ հնարել կամ եղած մասնակի դեպքերը սաստիկ չափազանցացրել, որպէսզի Սոսրովին քրիստոնեաներին թշնամի և «աստվածամարտ» զուրս բերի։

Ասկայն այս բոլոր անմտութիւններն ու հակասութիւնները Ակինյանն ինչո՞ւ է ստեղծել։ Իրօք, լինելով V դարի հայոց ապստամբութեան պատմիչը, Եղիշեն ոչ մի գործ չունի Սոսրով և 572-ի հայոց ապստամբութեան հետ և երբեք չի կարող ժամանակակից եղած լինել VI դարի վերջերին ապրող Հովհաննէս Եփեսացու հետ։ Եւ Եղիշենի Հազկերտին տված բնութագրերն էլ ամենին չի կարող հարմարվել Սոսրով և ինչ Միթե հնարկու Սոսրով և ի մասին կարող էր ասվել, թե նա անհաջողութիւններ

րից այնքան է վհատվել ու իրեն կորցրել, այնպիսի ձևով է սկսել խոսել, որ «ամենայն վղուրկըն և պատուական նախարարք, որ նստելին յատենին և ունկն դնելին յեղյեղուկ լեզուի նորա, ամաչեցեալ կորանային և ընդ երկիր պշնուին և զղլուխ ի վեր ոչ կարէին համբառնալ» (Ալիշե, էջ 105—107), Էնավ ոչ Որովհետև Քոստով I ամենեկին պատճառ չունէր վհատվելու. նրա դործերն ամեն տեղ հաջող էին գնացել մինչ այդ, և արեւելյան պատերազմից կորազլուխ դարձողը նա չէ, այլ, ինչպես տեսանք, Հաղկերա II-ն է, ինչպես ճիշտ պատմում է Եղիշեն:

Իացի այդ, որ Քոստով I-ի տնուներ, չնայած հայկական ապսամբուրությանն ու նրա հետ կապված խնդիրներին, այնուհետև էլ սիրով ու երախտազիրտությամբ են հիշել քրիստոնյաները, այդ տկնրախ երևում է այն հանդամանքներից, որ նախ՝ թե՛ հայ և թե՛ օտար պատմիչները նրան մահվան մահճում քրիստոնեություն են ընդունել սալխս, և երկրորդ, որ Քոստովից դեռ հարյուր տարի հետո էլ քրիստոնյաներն իրենց երախտազիրտությունը դեպի Քոստովը նրանով են արտահայտում, որ թաղում են նրա թոռան թոռ դժբախտ Հաղկերա III-ին, ինչպես պատմում է Իրն Աթիրը III, 96 (տես նաև Նյսլիբե, Tabari, էջ 162, ծանոթագրություն), որ անկարելի կլիներ, եթե նա իրոք քրիստոնեության դեմ ընդհանուր հայաժանքներ հանած լիներ:

Այս մեթոդով շարունակելով իր ուսումնասիրությունը՝ Ակինյունը հասնում է բազմաթիվ միանգամայն անընդունելի եզրակացությունների, որոնցից, տեղի սղության պատճառով, հիշենք միայն մի երկու ամենակարեւորները:

Ակինյանը գտնում է, օրինակ, որ «Հայոց փափկասուն տիկնայքը» իրենց հայրենիքում չէին գտնվում, այլ փախել էին Կոստանդնուպոլիս, և շարունակում է, թե այդ տիկնանց հարքունուստ սոճիկը Տիգրոնից չէր կարող լինել, այլ անշուշտ կայսեր նշանակածն էր: Պարսիկներն ամեն ինչ հափշտակելուց և հարքունիս դրավելուց հետո ինչու պիտի ոոճիկ աային նախարարների կանանց,—ասում է Ակինյանը. «այս անհեթեթ պիտի համարվի անշուշտ: Նախ, բոլորովին անհասկանալի է, թե ինչու պիտի հայ նախարարների կանայք Կոստանդնուպոլսում եղած ժամանակ «հանապաղ ընդ և հետի երթային ի տունս աղօթից», ինչու նրանք ցերեկն արեակեղ պիտի լինեին և գիշերը գետնարեկ. չէ՞ որ Հովհաննես Եփեսացի ժամանակակից պատմիչը պատմում է, և Ակինյանն էլ մեջ է բերում այդ, թե փախստականներն «ընդունեցին կայսերական նվերներ, պարզենք, մեծապատիվ հյուրասիրվեցին, շնորհվեցին տներ և բնգարձակ կայսերական բնակարաններ բոլոր անոնց. սրոնք էկած լին տնկե (Հայաստանից) կտրողիկուսի հետ»: Այս ինչ անբացատրելի հակասություն է, երկրորդ, չէ՞ որ Եղիշեն VII գլխում պատմում է, թե երկրի բերդերում ամբացած հայ իշխանները, լսելով Հաղկերա II-ի տված ներման հրովարտակի մասին, մարդպանի միջոցով կամք հայտնեցին ներկայանալ թագավորին՝ բացատրություններ տալու համար: «Եվ դայս լուեալ թագաւորին, ոչ կարչանօք այլ արձակ ոտիւք և արձակ ձեռօք հրամայեաց առ ինքն կոչել, Ածին վազվաղակի գկին և գորդիս, և գինչս իւրաքանչիւր ետուն ի ձեռս մարգպանին, և ինքեանք փութտնակի գնացին ի ձմերոցն արքունի»: Ի՞նչ է նշանակում այս, եթե ոչ, որ անշուշտ թագավորի հրամանով մարդպանին

հանձնարարված էր պահպանելու նրանց գույքն ու բնաանիքներին, և որ դրա համար նրանց պետք է ապրուստի միջոցներ կամ սոճիկներ արվելին: Երբ որդ, Ղազար Փարպեցին Պերոզի մասին ասում է՝ «Կարգեաց ձեզ (հայ նախարարներին) սոճիկ ի հրե, և կանանց ձերոց յաշխարհի իւրեանց» (Էջ 108): Սա ցույց է տալիս, որ այդ ձևով սոճիկ նշանակելու սովորու- թյունը Պարսկաստանում կար: Հավանորեն Հազկերա 11-ի օրով հայ նախա- րարների կանանց համար սահմանված ապրուստի միջոցները հետո, նա- խարարների դատապարտության հետևանքով, կարվել էին (այստեղից և հասկանալի է դառնում նրանց նեղ վիճակը) և Պերոզի օրով նորից վե- րականդնվել: Այսպիսով, դուռ երևակայության արդյունք է «հայ վաճառ- սուն տիկիներին» դատանդնուպոլիս տեղափոխելը:

Ապա Ակինյանն ասում է, թե Շապուհի հալածանքներից հետո աղ- նարկված հրովարտակր «միայն կալատի կրոնի ազատության հրամա- նագիրը կրնա ըլլալ (Գիրք Թղթոց, 60 և Արևոս, 122—123)», Հարց է առաջ գալիս՝ ինչու: Չէ՞ որ հենց Ակինյանն ինքր մեջ է բերում ասորական «Փոքոցոց գրքից», թե արդեն Հազկերա 1 (399—420) «վերստին երամայեց շինել ամենայն շֆեղությամբ իր բովանդակ պատուիցան մեջ եղած բոլոր եկեղեցիները, որոնք իր հայրերու օրով քանդված էին, ազատ արձակել այն ամենքը, որոնք վասն աստուծո փորձված էին, իրավունք տալ, որ բահանայք և տոաջնորդք, ինչպես և կղերականք ազատ և աներկյուղ շրջին» (Braun, Das Buch der Synhados, էջ 8): Ի՞նչ է այս, եթե ոչ սկրոնի ազատու- թյան հրամանագիր», և ինչու ուրեմն միայն ևսուրով 1 կարող էր ասել, թե «իմ հայրն ազատ է թողել կրոնը և պատվում էր եպիսկոպոսներին»: Ար է այստեղ հասարակ տրամաբանությունը:

Այնուհետև, իբրև ապացույց, թե Եղիշի մեջ աղնարկներ են պահված կայսեր և Հայոց միջև 572-ի ապստամբության սոթիով կնքված դաշինքի, Ակինյանը բերում է հետևյալ կտորները Եղիշից, բայց միանգամայն բռնազրոսիկ կերպով իրեն ասածին հակառակ բառերը փակուղծերի մեջ է առնում իբրև հեաազայի հավելում, կամ պարզ ու հասկանալի և իրենց տեղին գործածված բառերի փոխարեն ուրիշներն է դնում, «և և իբրև այս- պէս հաստատեցաւ [և հատաւ] օղնականութիւն յուսոյն նոցա ի մարդկանէ (կայսերէ), դարձեալ սուրբ եպիսկոպոսունքն քաջալերել սկսան դանձինս և և զգորսն ամենայնս: Ակինյանը չի զգում, որ այդ ձևով փոխված և միտքը հակառակ շրջված նախադասության մեջ «դարձեալ» բառն անիմաստ է դառ- նում, իսկ հետագա նախադասությունը՝ բոլորովին անմիտ: Կայսրից օգ- նության հուշս ստացած հայերի մասին ի՞նչպես կարելի էր ասել՝ «Թէպէտ և հայէին յիւրեանց սակաւաբիւնն և յերկսցունց յազատութեան մի օրանու- րին, ոչինչ վատարտեալ զողային... զիւրին է աստուծոյ սատուք գրազմաց գործ գործել» և այլն: Իսկ V դարի Վարդանանց ապստամբու- թյան համար այն միանգամայն տեղին է և հասկանալի:

Մյուս օրինակը. «Ինչ կթվի, թե այս մեծ հաջողության (հայ-հույն դաշինքի) մասին է խոսքը, երբ կրավի, թե «Իբրև այս ամենայն յաջողու- թիւն յինէր երկիգածացն աստուծոյ, ամենայն եպիսկոպոսք և երիցունք պատուէր հրամանի տուեալ աշխարհին, զողջոյն ամիսն Վաղոց պահօք և աղօթիւք առնել ինդրուածս առ Աստուած և դաօն պատերազմացն յաղ-

թուփեան (գաշանցն յաջողութեան) խառնել ի ս. տօն Յայտնութեանն Քրիստոսի, զի անխափան կայցէ մեծ յիշատակարանս այս ընդ աստուածային անանց տօնին»։ Իբրև բացատրություն Ակինյանն ավելացնում է. «Քաղոց ամիսը 570-ին կհամապատասխաներ հուլյան ամիսը նոյեմբերի 3—դեկտեմբերի 2 շրջանին»։ Հավանորեն այս միջոցին մեկնած էր Ատոմ Գնունի Գոստանդնուպոլիս, և վերադարձած դեկտեմբերի մեջ, բերելով հետը կայսերական գիրը, որով կխոսաանար Հուստինոս օգնել Հայոց կայսերական դորքով։ Այս ուրախավետ օրվան հիշատակը կհանձնարարվի թխառնել ի սուրբ տօն Յայտնութեանն Քրիստոսի...։ Սակայն այս քաջատրությունը շուտով մոռանում է Ակինյանը և հետևյալ իսկ հողվածում մի նոր բացատրություն է ապրիս, իրարից բաժանելով իր հնարած «գաշանց հաստատությունը» և Եղիշեի «Պատերազմացն հաղթությունը»։ Նոր բացատրությունը հետևյալն է. «Քաղոց ամիսը 570 571 ամիսը կհամապատասխաներ հուլյան ամիսը 3 XI—2 XII ամիսը»։ Ինչպես տեսանք, շարունակում է Ակինյանը, այս ամիսը կնքված էր Հայոց և Հուստինոս կայսեր մեջ գաշինք։ Դաշանց եաստասուրյան համար սահմանված էին պահքն ու աղոթքը։ Իսկ «գաշն պատերազմացն յաղթութեան խառնել ի սուրբ տօն Յայտնութեանն Քրիստոսի, զի անխափան կայցէ մեծ յիշատակարանս այս ընդ աստուածային անանց տօնին» պետք է իմանալ այսպես. հաղթությունը տարված էր փետրվարի 3-ին, այն է՝ Հայտնության տօնին քառասնօրեքի մեջ այս պատճառով անոր հիշատակը տոնախմբել կսահմանվի Հայտնության տօնին հետո։ Դուրս է դալիս մի կասարյալ անհեթեթություն. հաղթության տօնը սահմանվում է կատարել ոչ թե անմիջապես, պահքից ու աղոթքից հետո նույն ամիսին, որ բնական և հասկանալի կլինեն, այլ «հաղթության» երևակայական օրից՝ փետրվարի 3-ից ուղիղ 11 ամիս հետո, հետևյալ տարվա Հայտնության տօնի հետ, որովհետև նույն տարվա Հայտնության տօնն արդեն անցել էր։

Ո՛րքան պարզ ու բնական է այս քաջաշնչուկի հանդեպ Եղիշեի տսածը և նրա անրոնազրոսիկ բացատրությունը։ Հաղթությունը կատարվել էր 450 թվի վերջերին. 450, 451 թվականին Քաղոց ամիսն ընկնում էր դեկտեմբերի 6-ից մինչև հունվարի 4-ը ներառյալ. հունվարի 5-ին ճրագալույցն է, իսկ 6-ին Քրիստոսի Ծննդյան ու Հայտնության տօնը։ Ուրեմն պատվիրվում է դեկտեմբերի 6-ից մինչև հունվարի 5-ը պահքով և աղոթքով անցկացնել, իսկ պատերազմում տարած հաղթության տօնը կատարել Հայտնության տօնի հետ միասին, խառնել նրա հետ։

Այնուհետև, հայերի և հույների այս գաշնազրության առթիվ Ակինյանը գրում է. «Պատգամավորություն մ'ալ ուղարկված է կայսերանխառքազար Հայոց եպիսկոպոսներու հովարական թղթով, ուղղված քաղաքին եպիսկոպոսներուն։ Երկու Եկեղեցիք, Հայոց և Հունաց, եպիսկոպոսության մեջ կմտնեն այսու։ Եղբայրակցության գեղեցիկ առհավատյա մը, որով կզոգվին Երկու Եկեղեցիներու ներկայացուցիչներու սրանքը, իրարու աղոթակից կրլան քրիստոնեական կրոնի հաստատության համար»։

Սրա հանդեպ պետք է ասել, որ նման հաղորդակցություն երկու եկեղեցիների միջև հնարավոր էր միմիայն մինչև V դարի առաջին կեսը, մինչև 451 թվականը կամ Քաղկեդոնի ժողովը, և ուրեմն՝ Եղիշեի պատ-

մաճն էլ միայն այդ մամանակաշրջանին կարող է վերաբերել VI դարի 70-ական թվականների համար այդպիսի հաղորդակցութիւնն ընդունել ընդունելին անկարելի է Ակիւնյանն աշտուկ, Հայոց և Հունաց եկեղեցիների «հաղորդակցութեամբ և գեղեցիկ եղբայրակցութեամբ տարված», արդեն ընդունելին մոտացել է իր գլխավոր ազդեցութեան մեկի բացահայտ վկայութիւնը՝ Այդ ազդեցութեան Հովհաննէս Եփեսացի պատմիչն է։ Նա, պատմելով հայերի Գոստանդնուպոլիս փախչելը Հովհաննէս II կաթողիկոսի հետ, ասում է, որ Հայոց եպիսկոպոսները, մայրաքաղաք գալով, սկզբում միամտութեամբ գնում էին և հաղորդում սինոդիոսների (իմա քաղկեդոնականների) հետ նրանց եկեղեցում։ Այս բանն իհարկէ հաճելի չի լինում միաբնակներին, բայց Հայաստանում էլ մեծ զժողովութիւն է առաջ բերում։ Հովհաննէս Եփեսացին այդ մասին ասում է. «Երբ այս բանը նրանց երկրում լուրս, զայրոցան նրանց վրա թե՛ մնացած եպիսկոպոսները և թե՛ երկրի բնակիչները. և նրանք խիստ (բաներ) զրեցիս սրանց, որի մասին մամանակը պահանջում է, որ լուրս ծածկենք» (եկեղեցական Պատմութիւն, գիրք II, գլ. 23)։ Ապա Հովհաննէս Եփեսացին պատմում է, որ նրանից եետո հայերը բաժանվեցին և առեւծովն համայնք կազմեցին։ Միքայել Ասորին (ed. Chabot, էջ 344 ասորերեն ընդգիր) բերում է մինչև իսկ կաթողիկոսին և նրա հետ եղածներին ուղարկված սպանական խոսքերը՝ «Ի՞նչ դուք խառնվեք սինոդիոսների հետ և նրանց հետ հաղորդվեք, ... մենք ձեզ այլևս չենք ճանաչի, այլ մինչև անգամ կնդրվենք»։ Ուշագրավ է նաև այն, որ Գոստանդնուպոլիս Փոտ պատրիարքը (858—867, երկրորդ անգամ 878—886) Հայոց Չաքարիա կաթողիկոսին (855—876) գրած թղթում (տե՛ս «Правосл. Палестин. Сборник XI 1, էջ 181—182») Վարդան Մամիկոնյանի համար ասում է, թե Հունաստան գալուց հետո՝ «Ի հաղորդութենն ի բաց եկաց, ասելով՝ քե վարդապետք մեր ոչ երամալցիին մեզ»¹։

Ահա թե ի՞նչպիսի կերպարանք ուներ VI դարի երկրորդ կեսին հայ և հույն «կրօնական եղբայրակցութիւնը» և ի՞նչպիսի անհարմար վիճակի մեջ կընկնի մարդ, եթե բացարձակ պատմական վկայութիւնները մի կողմ թողնի և կանխակալ նախապաշարմունքների վրա հիմնված իր թեզին առաջ մղի։

Այդ ընդունելին անհիմն թեզիսը պաշտպանելու համար է, որ Ակիւնյանն առաջարկում է «եռնացք բառի փոխարեն «հունացք» կարգալ հետևյալ նախադասութեան մեջ. «Դեռսպանո արձակեցին յաշխարհն Հունաց բանս գնել ընդ նոսա և ուխտ հաստատել» (գլ. III, էջ 100), առանց ուշադրութիւն դարձնելու, որ անմիջապէս դրան հետևող բառերը՝ «և ի բազում յայլ ազգս բարբարոսոց, որ համազորձքն էին Հունաց աշխարհին... յանձն թողին և զլրդումն քրիստոսնից» ամենեին թույլ չեն տալիս, որ աշտուկ բարբարոս հոների փոխարեն քրիստոնյա և ոչ-բարբարոս հույների անունը գրվի։

Ակիւնյանը մեջ է բերում նաև այն հանգամանքը, որ եղիշեն չի շեշտում Հովսեփի կաթողիկոս լինելը, մինչդեռ Ղազար Փարպեցին շեշտում է Այս առթիվ Ակիւնյանն ասում է. «Այս ընթացքը ակամա կասկած

¹ Այս ամբողջ անգուղարձի մասին տե՛ս Ե. Տեր-Միկայել, Հայոց եկեղեցու հարաբերութիւնները Ասորաց եկեղեցիների հետ. էջմիածին 1908, էջ 113—115.

կարթնցնե մեր մեջ խմբադրին եթե ոչ հայկական ծաղման, զոնե անոր Հայոց եկեղեցիո պատկանելու մասին: Նա հայ շրջանեն շատ հեռու՝ ստար շրջանակի մը մեջ ապրած ըլլալու է դիմնալ չկարենալու համար, թե ինչ էր հայ եկեղեցիո պետին խակական ախողորմ: Օտարք կարող էին նկատելով, թե Հայոց եկեղեցու գլխաւոր Արարատայան դաշախ մեջ ունի իր նիսար, «Եպիսկոպոս Այրարատի» անվանել գինըր: Համենայն դեպս, հայ տկանջին շատ պազ կհնչե «Հովսէփ Եպիսկոպոս Այրարատայ»: ուր կսպասվեր «Յովսէփ Երէց, կաթողիկոս Հայոց Մեծացո:

Նախ, խորթ է հնչում հենց «կաթողիկոսի» կողքին «երեց» բառը զնելը, և մենք ուրիշ ոչնչամ այդպիսի առողրման չենք հանդիպում, զոնե հաճախ չենք հանդիպում: Երկրորդ, Ղազար Փարպեցին հենց այդ պատճառով էլ մի քանի անգամ հասկապեա շեշտում է, որ Հովսէփը ձեռնադրութեամբ միայն երեց է եղել, բայց կաթողիկոսական իշխանութեան է վարել, և ապա միայն նրան առանց այլեայլութեան կաթողիկոս է անվանում: Այդ տեղերը հետեյալներն են.

Էջ 44— «Յովսէփ, որ թէպէտ և երէց էր ըստ ձեռնադրութեան, այլ զկաթողիկոսութեան Հայոց դաթոսն ունէր ի ժամանակին»:

Էջ 70— «Սուրբ Երէցն Յովսէփ, որ և զկաթողիկոսութեանն Հայոց ունէր դաթոս»:

Էջ 71— «Հանդերձ երանելեան Յովսէփաւ, որ թէպէտ և զձեռնադրութեան երիցութեան ունէր՝ սակայն յաթոս կաթողիկոսութեանն էր վիճակեալ արժանաւորապէս»:

Էջ 75— «Զսուրբ Երէցն Յովսէփ, որ զկաթողիկոսութեանն ունէր դաթոս ի ժամունս»:

Էջ 78— «Զսուրբն Յովսէփ, դարդարե կաթողիկոսն Հայոցս»:

Էջ 79— Միայն Ռչտուռայաց Սահակ Եպիսկոպոսի մասին է ասում, թե նա ձեռնադրութեան և օժման լրիւ կարգն ունի, «իսկ այլքս և ևս միապէս ևսք բաա կարգի քահանայութեանն»: Հովսէփի մասին ասում է. «Զսա, զոր տեսանէքս, թէպէտ և մանկապոյն քան զիս տեսանէք ախովք, այլ պատուով կարգեալ է արժանաւորապէս, և զլուխ է ամենայն Հայոց քահանայութեանց»:

Այնուհետև Փարպեցին վեց անգամ էլ Հովսէփին կաթողիկոս է անվանում (Էջ 86, 92, 98, 100, 101 և 110) առանց սրեւ, բացաարութեան: Այստեղից պետք է անշուշտ եզրակացնել, որ Հովսէփը ձեռնադրութեամբ ու օժմամբ կաթողիկոս չի եղել. այլ Մեարոպ Մաշտոցը վախճանվելիս նրան է հանձնել հայրապետական աթոռը իրրե «գլխաւորի, վերակացուի, տեղապահի», ինչպէս ասում է Կորյունը (Էջ 96), կամ «դաթոս Եպիսկոպոսապետութեանն Ետեղապետութեամբ յաջորդեաց հրամանաւ Երանելւոյն Մեսրոպայ»՝ նորին աշակերան Յովսէփ քահանայ ի Վայոց ձորոյ, ի Խոզոցիմ գեղջէ», ինչպէս ասում է Մովսէս Խորենացին (Ա գիրք, Կ: գլուխ, էջ 358): Այս իմաստով պետք է հասկանալ նաև Փարպեցու ասածին «գլխապի վերջի պարբերութեանը՝ «Զորոյ գնեա յաջորդեաց դաթոս Հայրապետութեան աշխարհիս Հայոց, հրամանաւ Երանելւոյն Մաշտոցի, սուրբն Յովսէփ, որ էր ի գուառէն Վայոց ձորոյ, ի գեղջէն որում անուն էր Խոզոցիմք»:

Այս է հազմանորեն պատճառը, որ զեղբերին ժամանակով ափելի մո-

աիկ Եղիշեն զգուշացել է Հովսեփին առանց այլևայլության կաթողիկոս անվանելուց, և ոչ թե չի իմացել Հայոց եկեղեցու պետի իսկական տիա-
 դուր, ինչպես ենթադրում է Ակինյանը. մանավանդ որ կաթողիկոս դառ-
 նալու համար այդ ժամանակներն անշուշտ պահանջվում էր արդեն Պար-
 սից թագավորի եթե ոչ հաստատությունը, զոնե համանությունը, ինչպես
 ցույց է տալիս Մահակ Պարթևի պատմությունը և, բացի այդ, կաթողի-
 կոսի տիադոսի հետ կապված կայվածական հարցեր էլ կային, որոնք Գրի-
 գոր Լուսավորչի տան ժառանգությունը լինելով՝ Մահակ Պարթևի մահից
 հետո այլևս ուրիշ անձերի չէին կարող անցնել, որովհետև նրանով այդ
 տոհմը մերժանում էր Հեատոպայի պատմիչ Ղազար Փարպեցին, որի ժա-
 մանակ, երեի, այդ հարցերն արդեն լուծված էին և Մահակ Պարթևից հե-
 առ արդեն մի քանի կաթողիկոսներ էին հայրապետական ավանդատել
 (Մելիսե, Մովսես, Գյուտ և Հովհան Մանդակունի, այլև Բարդին), կարող
 էր առանց դժվարության նաև կաթողիկոս անվանել Հովսեփ Երեցին, որ
 նա, սակայն, ինչպես տեսանք, առանց այլևայլության չի արել Միթե
 Ղազար Փարպեցի, 19 78 «Սարգսրե կաթողիկոսն Հայոց» արահայտու-
 թյան հենց միայն «Սարգսրե» բառը փայլուն ապացույց չէ՞, որ, բայց Ղա-
 զար Փարպեցու էլ Հովսեփ «Իրոճ» կաթողիկոսական իշխանությունը է մա-
 րել, բայց ձեռնադրված կաթողիկոս չի եղել, հակառակ դեպքում իմաստ
 չէր ունենա «Սարգսրե» բառը Այս ամենից հետո՝ ինչ զարմանալու բան
 կա, որ ժամանակակից ու դեպքերին ականաակա պատմիչ Եղիշեն Հովսեփին
 կաթողիկոս անունը չի ավելի Այն էլ պետք է ասել, որ Հովսեփին աստի-
 ճանով բուրբից բարձր, մեծ եպիսկոպոս և Այրարատի եպիսկոպոս անվա-
 նելով՝ Եղիշեն զրանով արդեն բավականաչափ շեշտել է նրա ղեկավար
 դերը մյուս եպիսկոպոսների մեջ և ասարությունը կամ խորթությունը տեսնել
 դրա մեջ բուրբովին չի կարելի Չպետք է մոռանալ նաև, որ Եղիշեն նույնիսկ
 Հոռմի պապին միայն Հոռմի եպիսկոպոս է անվանում և առհասարակ էլ
 եպիսկոպոսին մի վայրի (այս դեպքում «Այրարատի») տեսնում կոչելը շատ
 ավելի հին և բնորոշված սովորություն է եկեղեցական հիերարխիայի մեջ,
 քան ամբողջ երկրի («Հայոց Մեծոց») անունով, և մինչև այսօր ոչ մի
 բնիկ հայի ակտնջին պաղ չի հնչել Եղիշեի «Յոթնյակի» եպիսկոպոս Այրա-
 րատայն արտահայտությունը Իսկ Եղիշեի կամ նրա խմբագրի հայ լինելու
 կամ զոնե նրա Հայոց եկեղեցուն պատկանելու մասին կասկած հորուցելը
 սեփական մասներից ձգված ենթադրություն է, որ ոչնչով արդարացվել
 չի կարող, բացի ամբողջ խնդրին կանխակալ և միառևմտավոր մտակցում
 ունենալուց: Իսկապես, էլ ձր եկեղեցուն կարող էր պատկանել Եղիշեն կամ
 նրա խմբագիրը Հուճա-հոսմեական. բայց չէ՞ որ Եղիշեի խմբագիրն,
 բայց Ակինյանի, ինչպես կտեսնենք, սկսու միաբնյա մըն է՞: Միաբնակ
 մարդը նեոստորական էլ չէր կարող լինել, ուրեմն մնում է ենթադրել, որ
 ասորի միաբնակ է եղել Իսկ որակից է հասյա այն անկեղծ ու զուտ հայ
 հայրենասիրությունն ու ազգասիրությունը, որ հորդ ազդյունքի նման
 բխում է Եղիշեի յուրաքանչյուր էջից, և ինչն է ստիպում այդպիսի
 վայրիվերո ենթադրություններ անելու այնպիսի շափաղանց պարզ մի
 խնդրի մասին, ինչպիսին Հովսեփ Երեցի կաթողիկոսական իշխանու-
 թյունը տեղապահությամբ վարելը է և Եղիշեի նրան իրավամբ կաթողիկոս
 չանվանելը:

Այս հարցի քննությունն էլ, ուրիմն, պարզում է, որ Եղիշեի սեզրնադիրն անշուշտ Ղազար Փարպեցուց առաջ է, և նրա Պատմությունը հիրավի ժամանակակիցի և ականատեսի պատմություն է, որ, ինչպես տեսանք, ճշգրտություն արտացոլում է ժամանակակից հարաբերությունները:

Նույնքան և ավելի տարօրինակ ու անըմբռնելի են Ակինյանի կատարած բնագրական ուղղումներն ու վերականգնումները. այս ուղղություն քամր բավական ենք համարում իրեն նմուշ երկու օրինակ բերել, թեև նրանց թիվը շատ-շատ է: Առաջին օրինակ. «Եսկ զօրականքն (իմն եպիսկոպոս և հաւատացեալք) ... ոչ երբէք հեղցացեալ եմք յարքունի վաստակս և ոչ խառնեալ վատութիւն ընդ արտութիւն քաջութեան (այսինքն՝ չենք գործած պետական օրենքներու զեմ)» և այլն: Փակագծերի մեջ բերվածներն, ըստ Ակինյանի, պետք է եղած լինեն սկզբնական բնագրի մեջ. որի այժմյան տեքստը հարմարեցրել է, այգպիսով, խմբագիրը. զուրս է զայիս, որ եպիսկոպոսներն ու հավատացյալները զարձրած է «զօրականք», իսկ «քաջութեան հետ երկչոտութիւն շխտոնելն» էլ բռնել է «պետական օրենքների զեմ հանցանք չենք գործել» բառերի տեղը: Սա տեքստի վերականգնում չէ, այլ բացահայտ կամայական փոփոխություն: Այսպիսի բանասիրական մեթոդով կարելի է ամեն տեքստ վերածել իր տրամազծորեն հակասակին և ապացուցել ամեն բան:

Երկրորդ օրինակ. «Տնկատմամբ երեք եպիսկոպոսներու շարաշար մահվան կգրե Եղիշե պարզապեմ «ևս ահա իշխանութիւն առեալ շարաշար սպասաւորացն, զի զչորս զրնուորսն ի բաւն աւագացն մատուցեն ի փորձութիւն տանջանացն... և զամենայն ֆրասուն պատճառս արկանելը զկապելովքն (իմն նորադարձներու վրա)», Համեմատության համար ուշադրություն յարժանի են մեր բնագրած բառերը. Եղիշեի 4 անձը Ակինյանը զարձնում է 3, բացատրելով Գ և Դ տառերի սովորական շփոթությունը: Իսկ ինչպես են Եղիշեի ավագ զօրականները կամ իշխանները եպիսկոպոս դառնում, զրա մասին պետք է հարցնել Ակինյանին: Եւսցի այդ, Եղիշեի 4 նախարարները չեն սպանվում, այլ միայն շարաշարանքների են ենթարկվում, մինչդեռ Ակինյանի 3 եպիսկոպոսներն, ըստ Հովհաննես Լեփեսացու, մորթազերծ են արվում: Այս դժվարությունն էլ ոչինչ է Ակինյանի համար և նա բացատրում է. Լեփեսացին բերանացի պատմվածքից զիտե զեպրը և սկարելի է պատմվածքին անճիշտ իմացման վերագրել»։ «այսինքն՝ նրան ասել են, թե եպիսկոպոսներին շարաշարել են, իսկ նա թյուրիմացություն հասկացել է, թե նրանց մորթազերծ են արել: Նյութերին առհասարակ շատ կասկածելի է համարում այդ եպիսկոպոսների սպանությունը՝ վերագրելով այն կոստանդնուպոլիս փախած հայերի պատմածների շարաշարանքներին, և Ակինյանն ինքն էլ վերջում ավեացնում է, թե «հավանորեն ազատ արձակվեցան այս բանտարկյալները»։ Ուրիմն Ակինյանի ցանկացած նույնացումն ընդունելու համար հարկավոր է նախ՝ եպիսկոպոսների պատիժը թեթևացնել, մորթազերծությունը փոխարինել միայն շարաշարանքներով, երկրորդ՝ ավագ զօրականները պետք է զարձնել եպիսկոպոս, և երրորդ՝ չորսը պետք է դարձնել երեք. սերիշխոսքով՝ նախկին տեքստից ոչ մի բառ չպետք է թողնել իր տեղում:

Եւսցի բոլորովին գավեշտական է դառնում խնդիրը, երբ Ակինյանը փորձում է VI դարի անցուզարձով բացատրել թագավորի հրամանը այ-

բուժիտ բաղմուքներ Պան դրան ներսում արգելելու մասին: Թողնենք, որ Ակինյանն ինքր խոսի. «Երբ Խոսրովի՝ հազի բանակը վերադառնում է Տիգրոն, թագաւորը հրաման է տալիս, որ Դրիգորին (Ռաժիկին) սպանեն Տիգրոնի արևելյան կողմը գտնվող Չկարթա գր բեթ Բալան կոչված գյուղը: Թագաւորը թույլ տվաւ, որ բաստին դուռը բաց մնա, որպէսզի զեպի հոն խուժող բաղմուքները կարենա տեսնել զինքը» (Hoffmann, *Auszüge*, 82). — Այս բանը կակնարկե համարներն Եղիշե, երբ կգրե՝ «Անգլէն ի ներքս Պան դրանն արգելոյր զբաղմուքիւն այրուձիոյն... և հրաման ստալիւ ի վերայ դռնապանացն առնէին, թէ որ յարեկա առ մեզ գայցեն՝ թողցեն, իսկ յարեկից յարեմուտս՝ անանց լիցի ճանապարհ: Եւ իբրև արգել և փակեաց զնոսա յամուր յանել գառագիղն, որ յիրաւի ասացի ամուր և անել, քանզի չիք անդ տեղի փախստի և թաքստի, վասն զի շուրջանակի թշնամիք են բնակեալս... և այլն: Ինչ տրամարանությամբ հնարաւոր է բանտի դռները բաց բողմելը, որպէսզի հետաքրքիր պարտաբաղմութիւնը Դրիգոր Ռաժիկին տեսնի, նույնացնել Պան դրան փակվելու հրամանի հետ, որպէսզի այրուձիու բաղմութիւնը արևելքից արեւմուտք չկարողանա փախչել, միանգամայն անհասկանալի է. բայց առանց այն էլ տյնքան ակներև է Ակինյանի այս բացատրութեան անհեթեթութիւնը, որ կարիք չկա այլևս նրա վրա կանգ առնելու:

Անդրադառնալով Ավարայրի պատերազմում ընկած հայ նահատակների թվին, Ակինյանն իբրևն թույլ է տալիս ծագրելու Եղիշեին. «Նա աշխատանք չէ ասրած գումարելու թվերը, արդյունքը նշանակել է Ղազարի համաձայն, առանց «փորձով» ստուգելու գումարը: Ավելի՛ ապացույցի պիտի կարոտինք խմբագրին անճարակութիւնը հայտնանախառ ընելու»:

Եթե այս գործում նախատելու արժանի մե բան կա, այդ էլ հենց Ակինյանի վերաբերմունքն է զեպի Եղիշե և զեպի իր առջև դրված թվերը: Այստեղ, հիրավի, թվերի գումարման մեջ սխալ կա, բայց այդ սխալը ոչ թե Եղիշեինն է, այլ Փարպեցունը: Նա ասում է (Էջ 72—73). «Եւ որպէս շատ խուզիւ և բազում յննութեամբ հարցեալ և ուսաք զնահատակելոցն թիւս, որք ի տեղւոջ պատերազմին պսակեցան ընդ աւագ նախարարսն՝ երկերիւր եօթանասուն և վեց այր: Եւ գորս յամբողջացն իջուցեալ սպանին սրով և կամ փղօք կոխեցին՝ եօթն հարիւր և յիսուն այր: որք լինին միահամուռ հազար երեսուն և վեց այր»: Արդ՝ անուն-անուն հիշված 9 ավազ նախարարներ $+276 + 750 = 1035$ և ոչ թե 1036: Իսկ Եղիշեն (աես Վենետիկի տպագր. 1893 թ., էջ 225—226) միանգամայն ճիշտ գումարված տալիս է 9 ավազ նախարար $+ 287 + 740 = 1036$: Ով է այստեղ, ուրեմն, ծագրելին: Թող գատեն ընթերցողները:

Այնուհետև, տարօրինակ են Ակինյանի կատարած անձերի նույնացումները. այնքան տարօրինակ, որ ոտքից տակ այլևս ամուր գետին չես դրում ամենեին, այլ միայն մի բարակ լար. որի վրայով չենք կարծում, թե ուրիշ մեկն էլ փոտահանա անցնել, բացի Ակինյանից: Այդպէս, նրա ասելով, Եղիշեի մեջ Միհրներսեսի համար գործածված «գտնացեալ ծերք» պետք է ճանշուշտ արքայից արքայն լինի: Միհրներսեսի փոխարեն պետք է կարդալ Վզուրկ-Միհր (Խոսրով Ա-ի ժամանակակից): Այս առթիւ Ակինյանն ասում է. «Եթե պատմական համարները հանուն Միհրներսեսի Եղի-

շեի քով պահված նամակը, ինչ ավելի հավանական կթվի վերադրել զայն Վզուրկ-Միհրի և խորագիրը կարդալ «Վզուրկ Միհր Վզուրկ հրամանատար Երան և Աներան» («Հանդես Ամսօրյա», 1932, էջ 566)։ «Եղիշեի խորագրի» ղյուրավ կարող էր Ղազարի ազգեցությամբ Վզուրկ Միհրը դարձնել Միհրենքսեհ, որի սօսօս — «մեծաւ անարգանօք յուզարկեցաւ ի տուն իւր» (Եղիշե, VIII գլուխ) — մեծ նմանություն օւնի Վզուրկ-Միհրի վախճանի մասին պատմածին» (ընդգծումն իմն է. Տ.-Միհ.) :

Իրօք, զարմանալի մեծ է նամանությունը Միհրենքսեհի պաշտօնանկ է լինում և «անարգանօք» իր տունն ուղարկվում, բայց հանգիստ ապրում է «մինչև ցօր վախճանի կենաց իւրօք», մինչև իսկ հնարավորություն ունենալով թագավորի առաջ շարախոսելու կապյալ նախարարների մասին, բայց չէր ուղում այդպիսի բան անել, մինչդեռ Վզուրկ-Միհրի մասին պատմվում է, թե նա բանտարկվում է և ապա սպանվում :

Տարբեր մարդկանց այս ձևով «ղյուրավ» նույնացնելու բազմաթիվ օրինակներ է առիտ Ակինյանը, բայց ամենից արատոցը դրանց մեջ այն է, որ նա միմյանց չես համեմատում և միևնույն անձի զանազան հորջորջումներն է համարում Վասակ Այուլնի = Վահան Այուլնի = Շավասպ = Դենշապուհ : Սրանք բոլորն էլ զանազան ախլի բնություններ են գործ դնում Հայոց երկրում, և այդ բնությունները համեմատելով իրար հետ, Ակինյանն ապացուցում է անձերի նույնությունը Սրինակ, VI դարի Դենշապուհը շատացնում է «շնմությունը» (Ասոցիկ, 84), Սուրենը «չընայր ընդ կանայս աղատաց ոչ առնելով զայրն աէր կնոջ իւրոյ» (Ասոցիկ, 84), Շավասպը մոզություն է ընդունում, բրիստոնեությունը և բրիստոնյաներին հարածում, բայց վերևում հիշված արարքներից ոչ մեկը չի գործում (Թովմա Արժրունի, Կ. Պոլիս 1852, էջ 85), Եղիշեի Դենշապուհը հարկերը ծանրացնում է, եկեղեցին հարկի տակ դնում և «յամենայն տան արար խոսվութիւն», բայց նրա վերաբերմամբ էլ իրօք չկա շնմությունը շատացնելու կամ շնմություն անելու մասին : Սակայն այդ էլ ոչինչ չի նշանակում : Ակինյանը նամանությունը կամ նույնությունն ապացուցելու համար առաջարկում է «յամենայն ասն արար խոսվութիւն» բառերն այդ մտքով հասկանալ, իբր՝ «Եղիշեն ավելի համեստ ձևով է արտահայտվում» : Ավելի հեռուն գնալ իսկապես որ չի կարելի :

Ահա այս ձևով և բանաբարական այս մեթոդով Եղիշեն հայտարարվում է մի կեղծիք, որ առաջ գրված է եղել 572-ի ապստամբության մասին, և ապա մի «անշնորհք», «սուտ», «երազատես», «անխմաստսեր», «վայրիվերո» խմբադիր խորգախել է և Փարպեցուն ուղեցույց ունենալով՝ վերածել 451-ի ապստամբության պատմության : Բայց այսակեղ էլ ազատ չենք մնում Ակինյանի հակասություններից : «Հանդես Ամսօրյայի» 1931 թվի էջ 135-ում նա հայտարարում է, որ և «Վ յեղանակներու մեջ սկզբնագրեն փրկված է շտտ մոտ, նաև Դ—Ջ յեղանակներու գոնե կական կետերու մեջ», իսկ նույն համարի 187 էջում ինքն իրեն հակասելով ասում է. «Ամբողջ Ա. յեղանակն առհասարակ իր այժմյան կերպարանքին մեջ չի թվիր սկզբնական : Անոր բովանդակությունը կամ կրկնություն է Լ. յեղանակին և կամ անկե փրցված էջ մը կներկայացնե : Ինքն իր մեջ չի կազմեր ամբողջություն, միասնական միտք, շամփոփեր որոշ ժամանակ :

միանգամայն և անաստուածք», անշուշտ ոչ թե անոր համար, որ անոնք խորհուրդ չտվին կայսեր՝ Հայոց աջակցել, այլ որովհետև մասնակցած էին անոնք Քաղկեդոնի ժողովին և դատապարտած Քիսկոբասն ու իր հեռուորդները: Կծու միարնյա մրն է խմբադիրը, թաթխված է. դարու հակաքաղկեդոնական վեճերու մեջ»:

Աւրեմն, Ալիինյանին այս եզրակացութեան է բերել և նրան Եղիշեի բաղմադարչան «կեղծիքը» բաց անել է ստիպել միմիայն Եղիշեի ԱՄ դլխի համապատասխան հատվածը, որի մեջ Եղիշեն պատմելով, թե Մարկիանոս կայսրը չի կամեցել աջակցել լինել հայերին, ասում է, թե նա լսել է իր վառ ծառաներ Անատոլիոսի և ալորենյոսի խորհրդին, որոնք երկուսն էլ անարդ և վառ մարդիկ էին ու անաստված. ուստի անարի Մարկիանոսը ավելի լավ է համարել հեթանոսների հետ ունեցած իրազարգութեան դաշինքը պահպանել, քան պատերազմակից լինել քրիստոնեութեան ուխտին: Ասում ենք՝ միմիայն այս կետն է կական կարևորութեան ունեցողը Ալիինյանի փաստարկումների մեջ, որովհետև «Բյուզանդիայի և հայերի ս. դաշինքի» կամ «Հոսովնիքու և հայ ժողովրդչան միջև կնքված սերտ միարանութեան» էութեանը տեսանք վերևում, երբ խոսում էինք Կոստանդնուպոլսում քաղկեդոնականների ու աշնտեղ վախած հայ հոգևորականների ու իշխանների հաղորդակցութեան տպավորութեան մասին Հայաստանում, որտեղից հրահանգ ուղարկվեց վախածներին ոչ մի կրոնական-եկեղեցական հաղորդակցութեան չունենալ քաղկեդոնական հոսովնիքի հետ. իսկ թե, մյուս կողմից, ինչպես էին զգվեցրել այդ ս. դաշնակիցները՝ հայ ժողովրդին բուն Հայաստանում կատարած իրենց անթույլատրելի հարստահարութեաններով ու չարադործութեաններով, որի պատճառով և ժողովուրդն ասելով ասում էր հույներին, այդ էլ քաջ հայտնի է պատմութեանից և ծանոթ է նաև Ալիինյանին:

Սակայն ամեն մի անկողմնակալ և անկանխակալ բանասեր պետք է ասի, որ Ալիինյանի բերած վերջին հատվածում ոչ մի կրոնական-դավանարանական վիճարանութեան հետք չկա, ոչ էլ կարելի է որևէ բանից հետեցնել, թե խմբադիրը կծու միարնակ է, որ «թաթխված է ՎԱ դարու հակաքաղկեդոնական վեճերու մեջ»: Եվ իսկապես, ինչ կա Եղիշեի ասածի մեջ արատաւոր և տնքնակա՞ն Հայերը կյանքի ու մահու հայրենական պատերազմ մղելով պարսիկների դեմ՝ իրենց հավատակից բյուզանդացիներից օգնութեան են խնդրում, հույս դնելով նրանց սարխութեան ու քաջութեան» վրա: Իսկ սրանք չկարողանալով կամ չկամենալով պատերազմ սկսել պարսիկների դեմ՝ դրանում են որևէ օգնութեան հասցնել հայերին, որոնք այդպիսով միայնակ են մնում պարսից հզոր պետութեան դեմ: Պարզ չէ՞ միթե, որ այդ վերաբերմունքը պետք է մեծ սրանեղութեան պատճառներ հայերին և սաստիկ դաշրացներ հայրենասերներին: Ավելի շուտ կարելի է դարմանալ, որ Եղիշեն, ժամանակակից պատմագիրն ու բյուզանդացիների մերժման ամբողջ դառնութեանն անձամբ զգացած մարդը, ավելի խիստ չի արտահայտվել Մարկիանոս կայսրի և նրա խորհրդատուների մասին, այլ բավականացել է ասալին «անարի», իսկ վերջիններին՝ «անարդ, վատ և անաստված» մարդիկ անվանելով: Ամենաշատը, որ կարելի է այս հատվածի մասին ասել, այդ այն է, ինչ որ մենք ասել ենք. Եղիշեի մեր աշխարհարար թարգմանութեան 105-րդ ծանոթագրութեան

մեջ՝ Ալիքսանդրի գիրքը կարգալուց առաջ և որն այժմ էլ հարկ չենք համարում որևէ շափով ձևափոխել Այդ ծանոթագրությունները մերժում մենք ասել ենք. «Այդպիսի Մարկիանոսի և նրա ծառաների դեմ ուղղված այս նախատական խոսքերն մեջ չեն արտացոլում նաև Քաղկեդոնի ժողովի (451 թ.) հետ կապված հանդամանքներն ու այդ ժողովի շնորհիվ ամբողջ արևելյան կայսրության համառոտ մեջ կառավարված փոփոխությունը, որին բացառաբար է վերաբերվում Եղիշենը: Ինչու պետք է Քաղկեդոնի ժողովից 10—12 տարի հետո, 160-ական թվականների սկզբին, իր Պատմությունը գրող Եղիշեն, որ իր կրթությունն ստացել էր Կյուրեղի Աղևաանդրիայում, այսօր չկարողանար ասել Մարկիանոսի և յուրայինների մասին՝ նրանց արածի կործանարար հետևանքները ամբողջ Արևելյան կայսրության և մասնավորապես Պաղեստինի ու Եգիպտոսի համար արդեն տեսնելուց հետո, և ինչ հիմք կա իր արդար դայրույթն այդքան շափավոր կերպով արտահայտող մարդուն VII դարու ստեղծ և այն էլ «Եկեղեցի միարնյա մը» հայտարարելու: Եթե Եղիշեն VII դարում ապրող և այդ դարի հակաքաղկեդոնական վեճերի մեջ թափափված մեկը լիներ, անկարելի է, որ այդ հանդամանքը որևէ կերպով արտահայտված չլիներ թեկուզ, որինակ, Արտաշատի ժողովի դավանարանական նամակի մեջ, որտեղ այդպիսի վեճերի հետք անգամ չկա: Բացի այդ, VIII դարի մարդիկ Մարկիանոսին «անարի» չեն անվանում, այլ շատ ավելի խիստ մակդիրներ էին կոչում նրան, ինչպես «անօրեն», «ամբարիշտ», «վիրաց», «չարափառ» (Գիրք Թղթոց, էջ 119, 120, 121, 124, 143). դարձյալ մի ցայտուն ապացույց, որ Եղիշենն ոչ մի կերպով չէ նարավոր չէ իր տեղից շարժել և VIII դար տանել:

Այս հարցում էլ Ալիքսանդր փորձում է Ղազար Փարպեցուն հակադրել Եղիշենին և ասում է՝ «Զգալի է Փարպեցին գրչին տակ հանդեպ Մարկիանոսի խաղաղասեր զգածում մը, հակառակ հայոց խնդրանքին մերժմանս: Բայց մենք պետք է ասենք, որ այդ շատ բնական է և բացատրվում է նրանով, որ Փարպեցին գրել է դեպքերից 40—50 տարի անցած, երբ վերջն այլևս բարձր չէր, կրքերն իջած էին, հանդարտված և շատ բան մոռացված, և հույների մերժումը կարելի էր դիտել իրեն մի ցաղալը, բայց անցած պատմական դեպք («Կասեցուցին զմիտս թաղաւորին, և մասեցաւ ակնկալութիւն շայց, որում ուշ եղեալ մնային, և ոչ պատահեցաւ: Ղազար Փարպեցի, էջ 74), մինչդեռ Եղիշեն իրեն ժամանակակից ու դործին մասնակից անձ շատ ավելի սուր կերպով է զգացել հույներից օգնություն չստանալու օգրերդությունը հայերի համար և այդ պատճառով էլ ավելի խիստ սճով է արտահայտվել Մարկիանոսի և իր մարդկանց մասին, շանցնելով, ստեղծել, շափավորություն սահմաններից:

Արդյոք Ալիքսանդր այս բոլոր ապտրոյթն ճիշդի պատճառն ու հիմքը «հայ-հասմեական ուխտագրությունը» չէ՞, որի երազական տեսիլքի ձախողումը «հույնի է նրա մտղծրս: Ակամա ստիպված ենք զգում մեզ այսպիսի շատ տալու, երբ կարդում ենք, որ Ալիքսանդր կեղծիք է համարում նաև Եղիշեի «Անձեացեաց» կոչված ձեռագիրը: Այդ ձեռագիրը, որ պատկանելի է եղել մի օտարերկրացու, Սրբ Զատոյային, և որից Փայֆայանը կատարել է իր հրատարակությունը, ճիշտ է, «մինչև այժմ չէ հայտնված որևէ մասնագրանի մեջ», բայց մի թե սրանից հետևում է, որ այդ օրի-

նակը գոյություն չի ունեցել և Գալֆայանը հնարել է այն: Ահա թե ինչ է սառած այս մասին Ալիինյանը. «Գալֆայանը Պորեն վարդապետի նկարագրությունը կասկած կարթնեցնե իմ մեջ, ամբողջ կեղծիք կրվի: Անունները, որոնք հառաջ բերված են ձեռագրին հիշատակագրություններն, փնտրված բնարված անուններ կերևան Ձեռագրին իր արտաքին և ներքին հատկություններով այնքան խոր հնության կնիք չի կրեր... Ընծ կթվի, թե Գալֆայանը հրատարակել էր, ճշտություն մը ապու համար իր հրատարակության և ասով գայն Մխիթարյանը հրատարակութենն գերագանց բնծայելու ետևար, հանած է հրատարակ «Ըստ Անձեպեղեցն օրինակի» ճոխ վերատարածությունը (բնագրություններն իմն են: Տ.-Մին.): Ուրեմն ոչ միայն Անձեպեղեցն կոչված ձեռագրին իր բազմաթիվ հիշատակագրություններով, այլև Սրբ Չատվայթին հնարել, կեղծել ու հարմարեցրել է Գալֆայանը վարդապետը՝ Մխիթարյաններին իրենց հրատարակությունը սովորի մեջ բողոքելու ետևար: Կարելի է լրջորեն հաշվի նստել այսպիսի ենթադրությունների հետ և հնարավոր է որևէ լուրջ բանավեճ սրա շուրջը: Ալիինյանը բռնված է ամեն տեղ կեղծիք տեսնելու հիմանդրոյն ցանկությունը և նա սրարշավ առաջ է բնթանում՝ ռախ սակ տալով ամեն արկելք ու խոչընդոտ և վճռապես արհամարհելով ամեն մի իրական գովարություն: Նա արդեն կեղծիք է հայտարարել նաև Դապար Փարպեցու ամբողջ Վ գրքովագր (տես «Հանդես Ամսօրյա», 1935 թ., էջ 459):

Արանով վերջացնում ենք Ալիինյանի քննադատությունը մասին մեր տակիքը, որ առանց այն էլ շատ երկարեց և աճյալ արդեն մեզ արաւ մագրված սահմաններից:

Մեր բնդհանուր եզրակացությունը հետևյալն է.

Քննությունը ցույց տվեց, որ Ալիինյանը չի կարողացել համարիչ փաստերով ապացուցել իր վեց զլխավոր կոմաններից (տես էջ 65—66) և ոչ մեկը: Քննադատություն չեն գիմանում ոչ Հազկերտ Ա-ի տեղ Պորով I Անուշատվանին դնելը, ոչ Հազկերտի պատերազմասիրությունը մասին արած անհիմն դիտարկությունը, ոչ Հազկերտ Ա-ի բյուզանդացիների դեմ մղած պատերազմի միտումը, ոչ Բենջապուհին Վ գրքի վերջերս տեղափոխելը և ոչ էլ մյուս մանր-մունր կետերը: Ընդհանրապես հնարավոր չէ բանագրության համեմատություններով, երևակայական նույնացումներով ու անտեղի քաշքուղկներով եզրիչելի գարձնել 572-ի հայոց ապստամբության պատմիչ¹: Անկասկած է, որ եզրիչի «Վարդանանց ապստամբությունը» Վ գրքի երկրորդ կեսի գործ է, գրված է սկանառես մարդու կողմից և վերաբերում է 451 թվի ապստամբությանը: Եզրիչի հարցը հնարավոր է ճիշտ լուծել միայն բնդունելով, որ ինչպես մեր բոլոր հին մատենագիրները, այնպես էլ եզրիչի Պատմությունը հետադարձում, գուցե և ՎՎ գարում, թերևս նույնիսկ

¹ Հարկ ենք համարում այստեղ շեշտել, որ այն ամենը, ինչ մեջ է բերում ու բացատրում է Ալիինյանը 572-ի ապստամբության կապակցությունը հայ և օտար ազգայուններից, խիստ արժեքավոր են և բանասիրությունը նրանց կողքից անցնել չի կարող: Այդ էջերը Ալիինյանի ամբողջ աշխատության կեսից ազելին են: Ալիինյանի ճակատագրական սխալն սկսվում է նրանից, որ նա փորձում է եզրիչին էլ օգտագործել իրեն 572-ի ապստամբության ազգայուն:

572-ի ապստամբութեան և նրան հետեայ սրահնոյրոյնի գեղերի և հիշողութեանները ազդեցութեամբ, ենթարկելի է խմբագրման, և որոշ փոփոխութեաններ ու հափելումներ են մտել նրա մեջ, որոնցից մի քանիսը մենք մատնանշեցինք այս հոդուածում ¹։

Ե. Դ. ՄԻՆԱՏՅԱՆ

„ИСТОРИЯ ВАРДАНА“ ЕГИШЕ И ЕЕ НОВЕЙШИЙ КРИТИК

РЕЗЮМЕ

Вепокій мхитарист Н. Акишиян опубликовал в ежемесячном журнале «Անժես Ամսորյա» 1931—1937 гг. обширное исследование об «Истории Вардана и армянской войны» вардапета Егише. Это исследование вышло также отдельным изданием в двух томах: т. I, в 1932 г. (XII+399 стр.) и т. II в 1937 г. (406 стр.).

В этой работе Акишиян задался целью доказать, что «История Вардана» не является произведением писателя V в. вардапета Егише, а что первоначально оно было написано неизвестным автором и повествовало о восстании армян против персов в 572 г. По мнению Акишияна, впоследствии, в VII в., каким-то неумелым и бездарным редактором это произведение было специально приурочено к восстанию 451 г., по схеме труда Лазаря Парбского. По мнению Акишияна этот редактор «История Вардана» — аптихалкедопит, даже ярый монофизит, имеющий особое отношение к догматическим спорам в армянской церкви VII в., нарочно искажил первоначальный текст из ненависти к грекам и к греческой церкви.

Главнейшие аргументы Акишияна, на которых основаны его выводы, следующие:

1) Персидский царь Иездегерд II (439—457) был миролюбивым и добрым властелином, и к нему не подходит та характеристика жестокого и кровожадного царя, притеснителя христиан, которую дает Егише, но эта характеристика вполне подходит к Хосрову I Аношравану (531—579). Акишиян утверждает, что эпитеты «богоподобный», «бессмертный», которые у Егише даются Иездегерду II, уместны лишь в отношении Хосрова I Аношравана, ибо «Аношраван» означает не что иное, как «бессмертный», 2) Иездегерд II не был воицтвенным царем и не предпринимал никаких походов на Византийскую империю. 3) Так как не было войны, то, следовательно, не мог быть заключен и мир с разрешением беженцам возвратиться из Византии на родину. 4) При Иездегерде II в Армению не посылался из Ирана вельможа по имени Дешиапух и в V в. не проводилась перепись населения для изменения налогового режима; такая перепись и такое изменение в обложении налогами произведены только при Хосрове I,

¹ Աղիւկի խմբագրական բաժնաժնեթրուիւթեան օրինակ հաճեալ VI գլխի սրահնոյրոյնի ներառույթեան մեջ, որտեղ սկիզբ էր տեսանելի գրեկումն նշագրոյն և գիտարտեղումն ազդեցանք հաստատուն իր տեղում չէ և զմիտարացնում է ճիշտ միտքն ըմբռնելու թւարտումն իր տեղում չէ և հազանաբեմ խմբագրական հափելում է նաեւ III գլխի վերջի Քրիստոսի մարդկութեան փրարեւոյն հաստատուն. որ սկսում է «Այլ մեք ապրեալքս զթրութեամբ ապստամոյն» բառերով, և այլն և այլն։

и при нем же был послан в Армению марзпан Деншапух, о котором сообщает писатель X в. Асогик, и т. д.

В настоящей статье фактическими данными опровергаются положения Акиняна и доказывается вся несостоятельность его выводов. Основания для этого у автора статьи следующие:

1) Иездегерд II убил свою дочь и жену, многих своих вельмож, десятки тысяч своих подданных, организовал гонения не только против христиан, но и против евреев; почему же после всего этого искать в истории Ирана другого царя, к которому больше бы подходили эпитеты: жестокий, кровожадный, гонитель христиан и т. д.? Все это, как раз, подходит к Иездегерду II и не подходит к Хосрову I Аношраван, который никогда не поднимал гонений против христиан и проявлял веротерпимость; о нем впоследствии даже распространилась молва, что он на смертном одре принял христианство; об этом говорят и армянские, и сирийские источники. Известно также, что Хосров I давал в своей столице приют бежавшим из Византии греческим философам и заступался за них перед императором Юстинианом.

2) Эпитет «Аношраван» не означает только «бессмертный», но также и «блаженный», как это слово переводит Нельдеке; известно также, что «богоподобными» почитали себя не только все сасанидские цари, но так их называли и их подданные, что явствует из многочисленных свидетельств Лазаря Парбского.

3) Параграф VI мирного договора 562 г. не имеет никакого отношения к сообщению Егише о том, что имп. Феодосий II (408—450) передал в руки персидского царя тех персов, которые приняли христианство, вследствие этого убежали из Персии и жили в Константинополе; параграф VI названного договора предоставлял общее право беженцам обеих сторон вернуться на родину.

4) Перепись населения во время царствования Хосрова I была проведена «для облегчения положения народа в налоговом отношении», а это не только ничего общего не имеет с тем, что рассказывает Егише о Деншапухе, но даже противоречит этому рассказу. У Егише о Деншапухе говорится, что он еще больше увеличил налоги и ухудшил положение народа. Таким образом, нет никаких оснований отождествлять Деншапуха V века, о котором упоминает и Лазарь Парбский, с одноименным марзпаном VI века.

5) Совершенно не обосновано заявление Акиняна о том, что якобы Иездигерд II не был воинственным. Акинян этот вывод делает только на том основании, что Иездигерд II потерпел поражение от кушанов. Но можно ли всерьез говорить о невоинственности того или иного властелина лишь на том основании, что он терпел поражения?!

Обстоятельно анализируя всю аргументацию Акиняна, автор приходит к выводу, что Акиняну не удалось доказать ни одно из своих положений, что «История» Егише относится не к восстанию 572 года, а к войне армян против персов в 451 году и что книга Егише в первоначальном своем виде является произведением писателя V века, очевидца событий, вардапета Егише.